

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԳԵԿԱՎԱՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՓՈՒՆՀԱՍԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Անդամները սույնով համաձայնում են հետևյալի մասին.

Հոդված 1. Շրջանակներ և կիրառում

1. Սույն Փոխհամաձայնության կանոններն ու ընթացակարգերը կիրառվում են սույն Փոխհամաձայնության 1-ին Լրացման մեջ թվարկված համաձայնագրերի (սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում են որպես «ընդգրկված համաձայնագրեր») խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթների համաձայն հարուցված վեճերի նկատմամբ: Սույն Փոխհամաձայնության կանոններն ու ընթացակարգերը կիրառվում են նաև Անդամների միջև՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման համաձայնագրի (սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում է որպես «ԱՀԿ համաձայնագիր») և սույն Փոխհամաձայնության՝ առանձին վերցրած կամ որևէ այլ ընդգրկված համաձայնագրի հետ համակցված, դրույթներով սահմանված նրանց իրավունքների ու պարտավորությունների շուրջ անցկացվող խորհրդակցությունների և վեճերի կարգավորման նկատմամբ:

2. Սույն Փոխհամաձայնության կանոններն ու ընթացակարգերը կիրառվում են՝ հաշվի առնելով ընդգրկված համաձայնագրերում պարունակված վեճերի կարգավորման այն հատուկ կամ լրացուցիչ կանոնները և ընթացակարգերը, որոնք հատկորոշված են սույն Փոխհամաձայնության 2-րդ Լրացման մեջ: Սույն Փոխհամաձայնության կանոնների և ընթացակարգերի և 2-րդ Լրացման մեջ նշված հատուկ կամ լրացուցիչ կանոնների և ընթացակարգերի միջև տարբերություն լինելու դեպքում գերակայում են 2-րդ Լրացման հատուկ կամ լրացուցիչ կանոններն և ընթացակարգերը: Եթե վեճերի ժամանակ, որոնցում ներառնված են մեկից ավելի ընդգրկված համաձայնագրի կանոններ և ընթացակարգեր, հակասություն կա հատուկ կամ լրացուցիչ կանոնների և ընթացակարգերի և քննության ենթակա այդ համաձայնագրերի ընթացակարգերի միջև, և եթե վեճի կողմերը չեն կարողանում քննախմբի ստեղծումից հետո 20 օրվա ընթացքում համաձայնության գալ կանոնների և ընթացակարգերի շուրջ, ապա 2-րդ Հոդվածի 1-ին կետում նախատեսված վեճերի կարգավորման մարմնի (սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում է որպես «ՎԿՄ») Նախագահը, խորհրդակցելով վեճի կողմերի հետ, Անդամներից որևէ մեկի կողմից ներկայացված պահանջից հետո 10 օրվա ընթացքում որոշում է, թե որ կանոններին և ընթացակարգերին պետք է հետևել: Նախագահն ուղղորդվում է այն սկզբունքով, որ հնարավորության դեպքում պետք է օգտագործվեն հատուկ կամ լրացուցիչ կանոնները և ընթացակարգերը, և սույն Փոխհամաձայնության մեջ սահմանված կանոնները և ընթացակարգերը պետք է օգտագործվեն այնքանով, որքանով անհրաժեշտ են հակասությունից խուսափելու համար:

Հոդված 2. Վարչարարություն

1. Սույնով ստեղծվում է վեճերի կարգավորման մարմին՝ այս կանոններն ու ընթացակարգերը և, եթե այլ կերպ չի նախատեսված ընդգրկված համաձայնագրերում, ընդգրկված համաձայնագրերի խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթները կատարելու համար: Համապատասխանաբար, ՎԿՄ-ն իրավասություն ունի ստեղծելու քննախմբեր, ընդունելու քննախմբի և Բողոքարկման մարմնի գեկուցագրեր, հսկելու վճիռների և հանձնարարականների կատարումը և թույլատրելու ընդգրկված համաձայնագրերով սահմանված զիջումների և այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցումը: Այն վեճերի առնչությամբ, որոնք ծագում են Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագիր հանդիսացող ընդգրկված համաձայնագրի շրջանակներում, այստեղ օգտագործվող «Անդամ» հասկացությունը վերաբերում է միայն այն Անդամներին, որոնք համապատասխան Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրի կողմ են: Երբ ՎԿՄ-ն կատարում է Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրի դրույթները, այդ վեճի առնչությամբ ՎԿՄ-ի կողմից որոշումների կայացմանը կամ ձեռնարկված գործողություններին կարող են մասնակցել միայն այն Անդամները, որոնք այդ համաձայնագրի կողմ են:

2. ՎԿՄ-ն ԱՀԿ համապատասխան Խորհուրդներին և Հանձնախմբերին տեղեկացնում է համապատասխան ընդգրկված համաձայնագրերի դրույթների հետ կապված վեճերում եղած զարգացումների մասին:

3. ՎԿՄ-ն ժողովներ է անցկացնում այնպիսի հաճախությամբ, ինչքան անհրաժեշտ է սույն Փոխհամաձայնությամբ նախատեսված ժամկետներում իր գործառույթների իրականացման համար:

4. Եթե սույն Փոխհամաձայնության կանոնների և ընթացակարգերի համաձայն՝ ՎԿՄ-ն պետք է կայացնի

որոշում, ապա դա անում է ընդհանուր համաձայնությամբ¹:

Հոդված 3. Ընդհանուր դրույթներ

1. Անդամները հաստատում են իրենց հավատարմությունը ՍԱԳՀ-1947-ի XXII և XXIII Հոդվածների համաձայն վեճերի վարման մինչ այս կիրառված սկզբունքներին և սույնով հետագա մշակման ու փոփոխությունների ենթարկված կանոններին և ընթացակարգերին:

2. ԱՀԿ վեճերի կարգավորման համակարգը կենտրոնական տարր է առևտրի բազմակողմ համակարգի ապահովության և կանխատեսելիության ապահովման գործում: Անդամներն ընդունում են, որ այն նպատակ է Անդամների՝ ընդգրկված համաձայնագրերով սահմանված իրավունքների ու պարտավորությունների պահպանմանը և միջազգային հանրային իրավունքի ընդունված կանոններին համապատասխան՝ այդ համաձայնագրերում առկա դրույթների հստակեցմանը: ՎԿՄ-ի հանձնարարականներն ու վճիռները չեն կարող ավելացնել կամ նվազեցնել ընդգրկված համաձայնագրերով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները:

3. ԱՀԿ արդյունավետ գործունեության և Անդամների իրավունքների ու պարտավորությունների պատշաճ հավասարակշռման համար էական է այն իրավիճակների շտապ կարգավորումը, երբ մի Անդամը համարում է, որ ընդգրկված համաձայնագրերի համաձայն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրեն հասող օգուտները նվազել են մեկ այլ Անդամի կողմից ձեռնարկված միջոցների հետևանքով:

4. ՎԿՄ-ի կողմից արված հանձնարարականներն ու վճիռները նպատակ ունեն հասնելու հարցի բավարար կարգավորմանը՝ սույն Փոխհամաձայնությամբ և ընդգրկված համաձայնագրերով սահմանված իրավունքներին ու պարտավորություններին համապատասխան:

5. Ընդգրկված համաձայնագրերի խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթների համաձայն բարձրացված հարցերի բոլոր լուծումները, ներառյալ՝ միջնորդային որոշումները, պետք է համապատասխանեն այդ համաձայնագրերին և չպետք է վերացնեն կամ նվազեցնեն այդ համաձայնագրերով որևէ Անդամին հասող օգուտները և ոչ էլ խոչընդոտեն այդ համաձայնագրերի նպատակների իրականացմանը:

6. Ընդգրկված համաձայնագրերի խորհրդակցությունների և վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթների համաձայն բարձրացված հարցերի փոխադարձ համաձայնեցված լուծումների մասին ծանուցում է տրվում ՎԿՄ-ին և համապատասխան Խորհուրդներին ու Հանձնախմբերին, եթե դրա հետ կապված որևէ Անդամ կարող է որևէ հարց բարձրացնել:

7. Նախքան գործ հարուցելը Անդամը պետք է քննի, թե արդյունավետ կլինեն արդյոք սույն ընթացակարգերով սահմանված միջոցառումները: Վեճերի կարգավորման գործակառույցի նպատակը վեճի դրական լուծման ապահովումն է: Անկասկած, պետք է գերադասվի վեճի կողմերի համար փոխադարձ ընդունելի և ընդգրկված համաձայնագրերին համապատասխան լուծումը: Փոխադարձ ընդունելի լուծում չլինելու դեպքում վեճերի կարգավորման գործակառույցի առաջին նպատակը, սովորաբար, խնդրո առարկա միջոցների վերացումն ապահովելն է, եթե պարզվում է, որ դրանք չեն համապատասխանում ընդգրկված համաձայնագրերից որևէ մեկի դրույթներին: Փոխհատուցման տրամադրմանը պետք է դիմել միայն, եթե միջոցի անմիջապես վերացումը հնարավոր չէ, և միայն որպես ժամանակավոր միջոց՝ մինչև ընդգրկված համաձայնագրին չհամապատասխանող միջոցի վերացումը: Վերջին միջոցը, որ սույն Փոխհամաձայնությունը նախատեսում է վեճերի կարգավորման ընթացակարգերին դիմող Անդամի համար, մյուս Անդամի նկատմամբ ընդգրկված համաձայնագրերով սահմանված զիջումների և պարտավորությունների՝ խտրական հիմունքով ժամանակավոր դադարեցման հնարավորությունն է, ընդ որում՝ այդպիսի միջոցները ենթակա են ՎԿՄ-ի կողմից թույլտվության:

8. Այն դեպքերում, երբ խախտվում է ընդգրկված համաձայնագրով ստանձնված պարտավորությունը, համարվում է, որ գործողությունն, առաջին մոտեցմամբ, վերացման կամ նվազեցման դեպք է: Դա նշանակում է, որ սովորաբար ենթադրվում է, որ կանոնների խախտումը վնասակար ազդեցություն ունի այդ ընդգրկված համաձայնագրի կողմ հանդիսացող մյուս Անդամների վրա, և այդ դեպքերում մեղադրանքը հերքելն այն Անդամի գործն է, որի դեմ ներկայացվել է բողոքը:

9. Սույն Փոխհամաձայնության դրույթները չեն վնասում Անդամների՝ ԱՀԿ համաձայնագրով կամ Առևտրի բազմակողմ-կամավոր Համաձայնագիր հանդիսացող ընդգրկված համաձայնագրով որոշում կայացնելու միջոցով ընդգրկված համաձայնագրի դրույթների պաշտոնական մեկնաբանություն ձեռք բերելու իրավունքները:

10. Հասկանալի է, որ վեճերի կարգավորման ընթացակարգերի օգտագործման ու հաշտեցման պահանջները չպետք է նկատի առնվեն կամ համարվեն որպես վիճաբանության գործողություն, և որ վեճի ծագման դեպքում բոլոր Անդամները բարեխղճությամբ կընդգրկվեն այս ընթացակարգերի մեջ՝ ջանալով լուծել վեճը: Հասկանալի է նաև, որ տարբեր հարցերի վերաբերյալ բողոքներն ու հակաբողոքները չպետք է կապակցվեն իրար:

11. Սույն Փոխհամաձայնությունը կիրառվում է միայն խորհրդակցությունների նոր պահանջների

¹ Համարվում է, որ ՎԿՄ-ն՝ իր քննարկմանը ներկայացված հարցի վերաբերյալ որոշումը կայացրել է ընդհանուր համաձայնությամբ, եթե ՎԿՄ ժողովին, որի ընթացքում կայացվել է որոշումը, ներկա ոչ մի Անդամ պաշտոնապես չի առարկում առաջարկված որոշմանը:

նկատմամբ, որոնք ներկայացվել են ընդգրկված համաձայնագրերի՝ խորհրդակցությունների վերաբերյալ դրույթների համաձայն, ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո: Այն վեճերի նկատմամբ, որոնց համար ՄԱԳՀ-1947-ով կամ ընդգրկված համաձայնագրերի նախորդը հանդիսացող որևէ այլ համաձայնագրով խորհրդակցությունների պահանջ է ներկայացվել մինչև ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը, շարունակում են կիրառվել ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից անմիջապես առաջ գործող՝ վեճերի կարգավորման համապատասխան կանոններն ու ընթացակարգերը²:

12. Անկախ 11-րդ Հոդվածից, եթե ընդգրկված համաձայնագրերից որևէ մեկի հիման վրա բողոքը ներկայացվում է զարգացող Անդամ երկրի կողմից ընդդեմ զարգացած Անդամ երկրի, ապա բողոքող կողմը որպես այլընտրանք կարող է դիմել սույն Փոխհամաձայնության 4-րդ, 5-րդ, 6-րդ և 12-րդ Հոդվածներում պարունակված դրույթներին, 1996թ. ապրիլի 15-ի Որոշման համապատասխան դրույթներին (BISD14S/18)՝ բացառությամբ, որ եթե Քննախումբը համարում է, որ այդ Որոշման կետ 7-ով նախատեսված ժամկետը բավարար չէ իր զեկուցագիրը տրամադրելու համար, ապա այդ ժամկետը կարող է երկարացվել՝ համաձայնեցվելով բողոքող կողմի հետ: 4-րդ, 5-րդ, 6-րդ և 12-րդ Հոդվածների կանոնների և ընթացակարգերի և Որոշման համապատասխան կանոնների և ընթացակարգերի միջև տարբերություն լինելու դեպքում գերակայում են վերջինները:

Հոդված 4. Խորհրդակցություններ

1. Անդամները հաստատում են իրենց վճռակառույցները՝ Անդամների կողմից գործածվող խորհրդակցությունների ընթացակարգերի բարելավման և ամրապնդման հարցում:

2. Յուրաքանչյուր Անդամ հանձն է առնում բարյացակամ վերաբերմունք ցույց տալ մեկ այլ Անդամի կողմից՝ առաջինի տարածքում ձեռնարկված՝ որևէ ընդգրկված համաձայնագրի գործողության վրա ազդեցություն ունեցող միջոցների առնչությամբ ներկայացրած նյութերի շուրջ խորհրդակցությունների նկատմամբ և համապատասխան հնարավորություն ընձեռնել դրա համար³:

3. Եթե խորհրդակցությունների համար պահանջը ներկայացվել է համաձայն ընդգրկված համաձայնագրի, ապա այն Անդամը, որին ներկայացվել է պահանջը, պատասխանում է պահանջին դրա ստացման օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում և բարեխիղճ կերպով խորհրդակցությունների մեջ է մտնում պահանջի ստացման օրվանից հետո՝ ոչ ավելի, քան 30 օրվա ընթացքում՝ նպատակ ունենալով հասնել փոխադարձաբար բավարար լուծման, եթե այլ կերպ փոխադարձ համաձայնություն ձեռք չի բերվել: Եթե Անդամը չի պատասխանում պահանջը ստանալու օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում, կամ խորհրդակցությունների մեջ չի մտնում պահանջի ստացման օրվանից հետո՝ ոչ ավելի, քան 30 օրվա ընթացքում կամ փոխադարձ համաձայնեցված այլ ժամկետի ընթացքում, ապա այն Անդամը, որը պահանջել է խորհրդակցություններ անցկացնել, կարող է ուղղակիորեն պահանջել քննախումբ ստեղծել:

4. Խորհրդակցություններ պահանջող Անդամը խորհրդակցությունների համար բոլոր այդպիսի պահանջների մասին ծանուցում է ՎԿՄ-ին և համապատասխան Խորհուրդներին կամ Հանձնախմբերին: Խորհրդակցությունների համար ցանկացած պահանջ ներկայացվում է գրավոր կերպով, և նրանում տրվում են պահանջի պատճառները, ներառյալ՝ խնդրո առարկա միջոցների հատկորոշումը և բողոքի իրավական հիմքերի մատնանշումը:

5. Ընդգրկված համաձայնագրի դրույթների համաձայն տարվող խորհրդակցությունների ընթացքում, նախքան սույն Փոխհամաձայնությամբ սահմանված հետագա գործողության դիմելը, Անդամները պետք է ձգտեն հասնել խնդրի բավարար կանոնավորմանը:

6. Խորհրդակցությունները վարվում են գաղտնի կերպով և առանց վնասելու ցանկացած հետագա վարույթներում որևէ Անդամի ունեցած իրավունքները:

7. Եթե խորհրդակցությունների համար պահանջի ստացման օրվանից հետո՝ 60 օրվա ընթացքում չի հաջողվում խորհրդակցությունների միջոցով կարգավորել վեճը, ապա բողոքող կողմը կարող է պահանջել քննախումբ ստեղծել: Բողոքող կողմը կարող է պահանջել քննախումբ ստեղծել 60-օրյա ժամանակահատվածի ընթացքում, եթե խորհրդակցող կողմերը համատեղ համարում են, որ խորհրդակցություններով չի հաջողվում կարգավորել վեճը:

8. Անհետաձգելի դեպքերում, ներառյալ՝ փչացող սպրանքներին վերաբերող դեպքերում, Անդամները խորհրդակցություններն սկսում են պահանջի ստացման օրվանից հետո՝ ոչ ավելի, քան 10 օրվա ընթացքում: Եթե պահանջի ստացման օրվանից հետո՝ ոչ ավելի, քան 20 օրվա ընթացքում, խորհրդակցություններով չի հաջողվում կարգավորել վեճը, բողոքող կողմը կարող է պահանջել քննախումբ ստեղծել:

² Սույն կետը կիրառվում է նաև այն վեճերի նկատմամբ, որոնց վերաբերյալ քննախմբի զեկուցագրերը չեն ընդունվել կամ լիարժեքորեն չեն իրականացվել:

³ Եթե որևէ այլ ընդգրկված համաձայնագրի՝ Անդամի տարածքում տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ դրույթները պարունակում են սույն կետի դրույթներից տարբերվող դրույթներ, ապա գերակայում են այդ ընդգրկված համաձայնագրի դրույթները:

9. Անհետաձգելի դեպքերում, ներառյալ՝ փչացող ապրանքներին վերաբերող դեպքերում, վեճի կողմերը, քննախմբերը և Բողոքարկման մարմինը գործադրում են բոլոր ջանքերը՝ զարծառույթները հնարավորին չափ արագացնելու համար:

10. Խորհրդակցությունների ընթացքում Անդամները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն զարգացող Անդամ երկրների առանձնահատուկ խնդիրներին ու շահերին:

11. Եթե խորհրդակցող Անդամներից տարբեր մեկ այլ Անդամ համարում է, որ էական շահագրգռություն ունի խորհրդակցություններում, որոնք վարվում են համաձայն ՄԱԳՀ-1994-ի XXII Հոդվածի 1-ին կետի, ՃԱԳՀ-ի XXII Հոդվածի 1-ին կետի կամ այլ ընդգրկված համաձայնագրերի համապատասխան դրույթների⁴, ապա այդ Անդամը կարող է նշված Հոդվածի համաձայն խորհրդակցություն անցկացնելու պահանջի շրջաբերման օրվանից հետո՝ 10 օրվա ընթացքում, խորհրդակցող Անդամներին և ՎԿՄ-ին ծանուցել խորհրդակցություններին միանալու իր ցանկության մասին: Այդ Անդամն ընդգրկվում է խորհրդակցությունների մեջ, եթե այն Անդամը, որին ուղղված էր խորհրդակցությունների համար պահանջը, համաձայնում է, որ էական շահագրգռության մասին պնդումը պատշաճորեն հիմնավորված է: Այդ դեպքում նրանք դրա մասին տեղեկացնում են ՎԿՄ-ին: Եթե խորհրդակցությունների միանալու համար պահանջը չի ընդունվում, ապա դիմող Անդամը ազատ է խորհրդակցություններ պահանջել համաձայն ՄԱԳՀ-1994-ի XXII Հոդվածի 1-ին կետի կամ XXIII Հոդվածի 1-ին կետի, ՃԱԳՀ-ի XXII Հոդվածի 1-ին կետի կամ XXIII Հոդվածի կետ 1-ի կամ այլ ընդգրկված համաձայնագրերի համապատասխան դրույթների:

Հոդված 5. Բարեխիղճ ծառայություններ, հաշտարարություն և միջնորդություն

1. Բարեխիղճ ծառայությունների մատուցումը, հաշտարարությունն ու միջնորդությունը ընթացակարգեր են, որոնք հանձն են առնվում կամավոր կերպով, եթե վեճի կողմերը գալիս են այդպիսի համաձայնության:

2. Բարեխիղճ ծառայություններ, հաշտարարություն ու միջնորդություն ընդգրկող վարույթները և հատկապես այդ վարույթների ընթացքում վեճի կողմերի զբաղեցրած դիրքերը գաղտնի են և չեն վնասում այդ ընթացակարգերով սահմանված ցանկացած հետագա վարույթներում կողմերի ունեցած իրավունքները:

3. Ցանկացած կողմ ցանկացած ժամանակ կորող է բարեխիղճ ծառայություններ, հաշտարարություն ու միջնորդություն պահանջել: Դրանք կարող են սկսվել և դադարեցվել ցանկացած ժամանակ: Բարեխիղճ ծառայությունների, հաշտարարության ու միջնորդության դադարեցման պահից բողոքող կողմը կարող է վարույթը շարունակել՝ քննախմբի ստեղծման պահանջ ներկայացնելով:

4. Եթե բարեխիղճ ծառայությունները, հաշտարարությունն ու միջնորդությունը սկսվում են խորհրդակցությունների համար պահանջը ստանալու օրվանից հետո՝ 60 օրվա ընթացքում, ապա բողոքող կողմը պետք է խորհրդակցությունների համար պահանջը ստանալու օրվանից հետո 60 օր ժամանակ տա՝ նախքան քննախմբի ստեղծում պահանջելը: Բողոքող կողմը կարող է պահանջել քննախմբի ստեղծել 60-օրյա ժամանակահատվածի ընթացքում, եթե վեճի կողմերը համատեղ համարում են, որ բարեխիղճ ծառայությունների, հաշտարարության ու միջնորդության գործընթացի միջոցով չի հաջողվում կարգավորել վեճը:

5. Վեճի կողմերի համաձայնությամբ բարեխիղճ ծառայությունների մատուցման, հաշտարարության ու միջնորդության ընթացակարգերը կարող են շարունակվել քննախմբի վարույթի հետ միաժամանակ:

6. Գլխավոր տնօրենը, գործելով պաշտոնական իրավասության շրջանակներում, կարող է բարեխիղճ ծառայություններ, հաշտարարություն ու միջնորդություն առաջարկել՝ նպատակ ունենալով Անդամներին աջակցել կարգավորելու վեճը:

Հոդված 6. Քննախմբերի ստեղծում

1. Եթե բողոքող կողմը պահանջում է, ապա քննախմբի ստեղծվում է ամենաուշը ՎԿՄ-ի այն ժողովի ժամանակ, որը հաջորդում է այն ժողովին, որի ժամանակ պահանջը առաջին անգամ հայտնվել է ՎԿՄ-ի օրակարգի հարցերում, եթե այդ ժողովի ժամանակ ՎԿՄ-ն ընդհանուր համաձայնությամբ չի որոշում քննախմբի

⁴ Ընդգրկված համաձայնագրերում խորհրդակցությունների վերաբերյալ համապատասխան դրույթները թվարկված են ստորև. Գլխատնօրենության մասին համաձայնագիր՝ 19-րդ Հոդված, Մանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագիր՝ 11-րդ Հոդվածի 1-ին կետ, Մանածագործվածքների և հագուստեղենի մասին համաձայնագիր՝ 8-րդ Հոդվածի 4-րդ կետ, Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիր՝ 14-րդ Հոդվածի 1-ին կետ, Առևտրին առնչվող ներդրումային միջոցների մասին համաձայնագիր՝ 8-րդ Հոդված, ՄԱԳՀ-1994-ի VI Հոդվածի իրականացման մասին համաձայնագիր՝ 17-րդ Հոդվածի 2-րդ կետ, ՄԱԳՀ-1994-ի VII Հոդվածի իրականացման մասին համաձայնագիր՝ 19-րդ Հոդվածի 2-րդ կետ, Նախաառաքումային ստուգման մասին համաձայնագիր՝ 7-րդ Հոդված, Ծագման կանոնների մասին համաձայնագիր՝ 7-րդ Հոդված, Ներմուծման լիցենզավորման մասին համաձայնագիր՝ 6-րդ Հոդված, Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիր՝ 30-րդ Հոդված, Պաշտպանական միջոցների մասին համաձայնագիր՝ 14-րդ Հոդված, Մտավոր սեփականության՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր՝ Հոդված 64.1, և Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերում եղած խորհրդակցությունների վերաբերյալ ցանկացած դրույթ, որ որոշվել է յուրաքանչյուր Համաձայնագրի իրավասու մարմինների կողմից և ծանուցվել ՎԿՄ-ին:

չստեղծել⁵:

2. Քննախումբ ստեղծելու համար պահանջը ներկայացվում է գրավոր ձևով: Նրանում նշվում է՝ անցկացվել են արդյոք խորհրդակցություններ, հատկանշվում են քննարկման առարկա մասնավոր միջոցները, և տրվում է բողոքի իրավական հիմքի հակիրճ ամփոփումը, որը բավարար է խնդրի հստակ ներկայացման համար: Այն դեպքում, երբ բողոքողը պահանջում է ստեղծել քննախումբ՝ գործունեության օրինաչափ նկարագրից տարբերվող գործունեության նկարագրով, գրավոր պահանջը պարունակում է նաև գործունեության առանձնահատուկ նկարագրի առաջարկվող շարադրանքը:

Հոդված 7. Քննախմբերի գործունեության նկարագիր

1. Քննախմբերն ունեն գործունեության հետևյալ նկարագիրը, եթե վեճի կողմերը քննախմբի ստեղծումից հետո 20 օրվա ընթացքում համաձայնության չեն գալիս այլ բանի շուրջ.

«Վեճի կողմերի վկայակոչած՝ ընդգրկված համաձայնագրի(երի) անունները) համապատասխան դրույթների լույսի ներքո, քննության առնել (կողմի անունը) կողմից փաստաթղթով ՎԿՄ-ին ներկայացված հարցը և կատարել այնպիսի հայտնաբերումներ, որոնք կօժանդակեն ՎԿՄ-ին այդ համաձայնագրով(երով) նախատեսված հանձնարարականները կատարելիս կամ վճիռները կայացնելիս»:

2. Քննախմբերն անդրադառնում են վեճի կողմերի վկայակոչած ցանկացած ընդգրկված համաձայնագրի կամ համաձայնագրերի համապատասխան դրույթներին:

3. Քննախումբ ստեղծելիս ՎԿՄ-ն կարող է լիազորել իր Նախագահին կազմել քննախմբի գործունեության նկարագիրը՝ խորհրդակցելով վեճի կողմերի հետ՝ հաշվի առնելով 1-ին կետի դրույթները: Այդպիսով կազմված գործունեության նկարագիրը շրջաբերվում է բոլոր Անդամներին: Եթե համաձայնություն է ձեռք բերվում գործունեության՝ օրինաչափից տարբերվող նկարագրի շուրջ, սպա ցանկացած Անդամ կարող է դրա հետ կապված ցանկացած հարց բարձրացնել ՎԿՄ-ում:

Հոդված 8. Քննախմբերի կազմ

1. Քննախմբերը կազմվում են բարձր որակավորում ունեցող պետական պաշտոնյա և(կամ) ոչ պաշտոնյա անձերից, ներառյալ՝ այն անձերը, որոնք մասնակից են եղել գործին կամ այն ներկայացրել են քննախմբին, ծառայել են որպես Անդամի կամ ՄԱԳ-Հ-1947-ի պայմանավորվող կողմի ներկայացուցիչ կամ որպես ներկայացուցիչ ցանկացած ընդգրկված համաձայնագրի կամ դրա նախորդը հանդիսացող համաձայնագրի խորհրդում կամ Հանձնախմբում կամ ծառայել են Քարտուղարությունում, դասավանդել կամ հրատարակվել են միջազգային առևտրային իրավունքի կամ քաղաքականության բնագավառում կամ ծառայել են որպես Անդամի բարձրաստիճան պաշտոնյա առևտրային քաղաքականության բնագավառում:

2. Քննախմբի անդամների ընտրությունը պետք է կատարվի՝ նպատակ ունենալով երաշխավորել անդամների անկախությունը, կենսագրությունների բավարար բազմազանությունը և փորձի լայն տիրույթը:

3. Այն Անդամների քաղաքացիները, որոնց կառավարությունները⁶ վեճի կողմեր կամ երրորդ կողմեր են, ինչպես սահմանված է 10-րդ Հոդվածի 2-րդ կետում, չեն ծառայում այդ վեճով զբաղվող քննախմբում, եթե վեճի կողմերն այլ կերպ չեն համաձայնել:

4. Քննախմբի անդամների ընտրությանն օժանդակելու համար Քարտուղարությունը պահում է պետական պաշտոնյա հանդիսացող և պետական պաշտոնյա չհանդիսացող՝ 1-ին կետում նկարագրված որակավորումներին տիրապետող անձերի նախնական ցանկ, որոնցից կարող են համապատասխանորեն քննախմբի անդամներ առաջ քաշվել: Այդ ցանկը ներառում է 1984թ. նոյեմբերի 30-ին սահմանված ոչ պետական քննախմբի անդամների ցուցակը և ընդգրկված համաձայնագրերից ցանկացածի համաձայն սահմանված այլ ցուցակներ ու նախնական ցանկեր, և դրանում պահպանվում են այդ ցուցակներում ու նախնական ցանկերում ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ժամանակ եղած անձանց անունները: Անդամները նախնական ցանկում ընդգրկելու համար կարող են պարբերաբար պետական պաշտոնյա հանդիսացող և պետական պաշտոնյա չհանդիսացող անձանց անուններ առաջարկել՝ տրամադրելով համապատասխան տեղեկություններ միջազգային առևտրի բնագավառում և ընդգրկված համաձայնագրերի բնագավառներում կամ դրանց բովանդակած նյութում նրանց ունեցած գիտելիքների վերաբերյալ, և այդ անունները ավելացվում են ցանկին ՎԿՄ-ի կողմից հաստատվելուց հետո: Ցանկը իրենում եղած յուրաքանչյուր անձի համար մատնանշում է ընդգրկված համաձայնագրերի բնագավառներում կամ դրանց բովանդակած նյութում անձերի ունեցած փորձի ու փորձագիտության մասնավոր ոլորտները:

⁵ Եթե բողոքող կողմը պահանջում է, սպա այս նպատակով ՎԿՄ-ն ժողովը գումարվում է պահանջից հետո՝ 15 օրվա ընթացքում, եթե ժողովի մասին ծանուցում է տրամադրվել դրա անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

⁶ Այն դեպքերում, երբ վեճի կողմեր են մաքսային միությունները կամ ընդհանուր շուկաները, սույն դրույթը տարածվում է մաքսային միությունների կամ ընդհանուր շուկաների բոլոր անդամ-երկրների քաղաքացիների վրա:

5. Քննախմբերը կազմվում են քննախմբի երեք անդամներից, եթե քննախմբի ստեղծումից հետո 10 օրվա ընթացքում վեճի կողմերը չեն համաձայնում ունենալ քննախմբի հինգ անդամներից կազմված քննախումբ: Անդամները շտապ կարգով տեղեկացվում են քննախմբի կազմի մասին:

6. Քարտուղարությունը վեճի կողմերին թեկնածուներ է առաջարկում՝ քննախմբում ընդգրկելու համար: Վեճի կողմերը չեն մերժում թեկնածությունները, բացառությամբ անհերքելի պատճառներ լինելու դեպքի:

7. Եթե քննախմբի ստեղծումից հետո 20 օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չի բերվում քննախմբի անդամների վերաբերյալ, ապա, որևէ կողմի պահանջով Գլխավոր տնօրենը, խորհրդակցելով ՎԿՄ-ի Նախագահի և համապատասխան Խորհրդի կամ Հանձնախմբի նախագահի հետ, որոշում է քննախմբի կազմը՝ նշանակելով քննախմբի անդամներ, որոնց Գլխավոր տնօրենը առավել նպատակահարմար է համարում՝ համաձայն վեճում քննարկման առարկա հանդիսացող ընդգրկված համաձայնագրի կամ ընդգրկված համաձայնագրերի ցանկացած համապատասխան հատուկ կամ լրացուցիչ կանոնների կամ ընթացակարգերի: Ոչ ուշ, քան Նախագահի կողմից այդ պահանջը ստանալու օրվանից 10 օր հետո, ՎԿՄ-ի Նախագահը Անդամներին տեղեկացնում է այդ կերպ ձևավորված քննախմբի կազմի մասին:

8. Որպես ընդհանուր կանոն՝ Անդամները հանձն են առնում թույլ տալ իրենց պաշտոնյաներին ծառայելու որպես քննախմբի անդամներ:

9. Քննախմբի անդամները ծառայում են իրենց անձնական իրավասության սահմաններում, այլ ոչ որպես կառավարության ներկայացուցիչներ կամ որևէ կազմակերպության ներկայացուցիչներ: Այդուհանդերձ, Անդամները նրանց ցուցումներ չեն տալիս և ոչ էլ ձգտում են ազդել նրանց վրա՝ կապված քննախմբին ներկայացված հարցի հետ:

10. Եթե վեճը տեղի է ունենում զարգացող Անդամ երկրի և զարգացած Անդամ երկրի միջև, ապա քննախմբում ընդգրկվում է առնվազն մեկ քննախմբի անդամ զարգացող Անդամ երկրից, եթե զարգացող Անդամ երկիրը այդպես է պահանջում:

11. Քննախմբի անդամների ծախսերը, ներառյալ՝ ճամփորդական ծախսերը և օրապահիկը, ծածկվում են ԱՀԿ բյուջեից՝ համաձայն Գլխավոր խորհրդի կողմից՝ Բյուջետային, ֆինանսական և վարչական հարցերով հանձնախմբի առաջարկության հիման վրա ընդունվելիք չափանիշների:

Հոդված 9. Ընթացակարգեր բազմակի բողոքների համար

1. Երբ նույն հարցի հետ կապված մեկից ավելի Անդամներ պահանջում են քննախումբ ստեղծել, այդ բողոքները քննելու համար կարող է ստեղծվել մեկ քննախումբ՝ հաշվի առնելով խնդրո առարկա բոլոր Անդամների իրավունքները: Հնարավորության դեպքում, այդ բողոքները քննելու համար պետք է ստեղծվի մեկ քննախումբ:

2. Մեկ քննախումբն իր քննությունը կազմակերպում և իր հայտնաբերումները ներկայացնում է ՎԿՄ-ին այնպես, որ ոչ մի կերպ վնաս չհասցվի այն իրավունքներին, որոնցից վեճի կողմերը կօգտվեին, եթե բողոքները քննվեին առանձին քննախմբերի կողմից: Քննախումբը տվյալ բողոքի վերաբերյալ առանձին զեկուցագրեր է ներկայացնում, եթե վեճի կողմերից մեկը այդպես է պահանջում: Բողոքողներից յուրաքանչյուրի ներկայացրած գրավոր նյութերը մատչելի են դարձվում մյուս բողոքողների համար, և յուրաքանչյուր բողոքող իրավունք ունի ներկա լինել, երբ մյուս բողոքողներից որևէ մեկը քննախմբին է ներկայացնում իր տեսակետները:

3. Եթե նույն հարցի հետ կապված բողոքները քննելու համար ստեղծվում են մեկից ավելի քննախմբեր, ապա միևնույն անձինք, առավելագույն հնարավորության սահմաններում, որպես քննախմբի անդամներ ծառայում են յուրաքանչյուր առանձին քննախմբում, և այդ վեճերի քննության գործընթացի ժամկետացանկը ներդաշնակեցվում է:

Հոդված 10. Երրորդ կողմեր

1. Քննության գործընթացի ժամանակ լիարժեք կերպով հաշվի են առնվում վեճի կողմերի շահերը և այլ Անդամների՝ վեճում քննարկման առարկա հանդիսացող ընդգրկված համաձայնագրի ներքո ունեցած շահերը:

2. Ցանկացած Անդամ, որն էական շահագրգռություն ունի քննախմբին ներկայացված հարցում, և որը ՎԿՄ-ին ծանուցել է իր շահագրգռության մասին (սույն Փոխհամաձայնության մեջ հիշատակվում է որպես «երրորդ կողմ»), հնարավորություն է ունենում ունկնդրվելու քննախմբի կողմից և գրավոր նյութեր ներկայացնելու քննախմբին: Այդ նյութերը տրվում են մաս վեճի կողմերին և արտահայտվում են քննախմբի զեկուցագրի մեջ:

3. Երրորդ կողմերը ստանում են քննախմբի առաջին ժողովին վեճի կողմերի ներկայացրած նյութերը:

4. Եթե երրորդ կողմը համարում է, որ արդեն քննության վարույթի առարկա հանդիսացող միջոցը վերացնում կամ նվազեցնում է որևէ ընդգրկված համաձայնագրով իրեն հասնող օգուտը, ապա այդ Անդամը կարող է դիմել սույն Փոխհամաձայնությամբ սահմանված վեճի կարգավորման սովորական ընթացակարգերին: Այդ վեճը, հնարավորության դեպքում, ներկայացվում է սկզբնական քննախմբին:

Հոդված 11. Քննախմբերի գործառույթը

Քննախմբերի խնդիրն է օժանդակել ՎԿՄ-ին՝ սույն Փոխհամաձայնությամբ և ընդգրկված համաձայնագրերով սահմանված իր պարտականությունները կատարելիս: Համապատասխանաբար, քննախմբերը պետք է անաչառորեն գնահատեն իրենց առջև դրված հարցը, ներառյալ՝ գործի փաստերի և ընդգրկված համաձայնագրերին համապատասխանության ու դրանց կիրառելիության անաչառ գնահատումը, և կատարեն այնպիսի այլ հայտնաբերումներ, որոնք կօժանդակեն ՎԿՄ-ին այդ համաձայնագրերով նախատեսված հանձնարարականները տալիս կամ վճիռները կայացնելիս: Քննախմբերը պետք է պարբերաբար խորհրդակցեն վեճի կողմերի հետ և պատշաճ հնարավորություն ընձեռեն նրանց՝ փոխադարձ բավարար լուծում մշակելու համար:

Հոդված 12. Քննության ընթացակարգեր

1. Քննախմբերը հետևում են 3-րդ Լրացման Աշխատանքային ընթացակարգերին, եթե քննախումբը վեճի կողմերի հետ խորհրդակցելուց հետո այլ բան չի որոշում:

2. Առանց քննության գործընթացն անհարկի երկարաձգելու, քննության ընթացակարգերը պետք է բավարար ճկունություն ապահովեն՝ քննախմբի զեկուցագրերի բարձր որակը երաշխավորելու համար:

3. Վեճի կողմերի հետ խորհրդակցելուց հետո քննախմբի անդամները հնարավորին չափ շուտ և, հնարավորության դեպքում, քննախմբի կազմի ու գործունեության նկարագրի շուրջ համաձայնություն ձեռք բերելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում ամրագրում են քննության գործընթացի ժամանակացույցը՝ հաշվի առնելով 4-րդ Հոդվածի 9-րդ կետի դրույթները, եթե դրանք առնչություն ունեն գործին:

4. Քննության գործընթացի ժամանակացույցը սահմանելիս քննախումբը բավականաչափ ժամանակ է տալիս վեճի կողմերին՝ ներկայացվելիք նյութերը պատրաստելու համար:

5. Քննախմբերը պետք է ճշգրիտ ժամկետներ սահմանեն կողմերի գրավոր նյութերը ներկայացնելու համար, և կողմերը պետք է հարգեն այդ ժամկետները:

6. Վեճի յուրաքանչյուր կողմ իր ներկայացվելիք գրավոր նյութերն ի պահ է տալիս Քարտուղարությանը՝ դրանք անմիջապես քննախմբին և վեճի մյուս կողմին կամ կողմերին փոխանցելու համար: Բողոքող կողմն իր առաջին ներկայացվելիք նյութերը ներկայացնում է նախքան պատասխանող կողմի նյութերի առաջին ներկայացումը, եթե քննախումբը 3-րդ կետում հիշատակված ժամանակացույցն ամրագրելիս և վեճի կողմերի հետ խորհրդակցելուց հետո չի որոշում, որ կողմերն իրենց առաջին ներկայացվելիք նյութերը պետք է ներկայացնեն միաժամանակ: Երբ առաջին ներկայացվելիք նյութերն ի պահ տալու համար հերթականություն է սահմանվում, քննախումբը խիստ ժամկետ է սահմանում պատասխանող կողմի ներկայացվելիք նյութերի ստացման համար: Հետագա ցանկացած ներկայացվելիք նյութերը ներկայացվում են միաժամանակ:

7. Երբ վեճի կողմերին չի հաջողվում փոխադարձ բավարար լուծում մշակել, քննախումբն իր հայտնաբերումները՝ գրավոր զեկուցագրի ձևով ներկայացնում է ՎԿՄ-ին: Այդ դեպքերում, քննախմբի զեկուցագրում շարադրվում են փաստերի վերաբերյալ հայտնաբերումները, համապատասխան դրույթների կիրառելիությունը և դրանում կատարված ցանկացած հայտնաբերման և հանձնարարականի հիմնական պատճառները: Եթե հարցին լուծում է գտնվում վեճի կողմերի միջև, ապա քննախմբի զեկուցագիրը սահմանափակվում է գործի հակիրճ նկարագրությամբ, և նրանում զեկուցվում է, որ լուծումը գտնվել է:

8. Ընթացակարգերն ավելի արդյունավետ դարձնելու համար, որպես ընդհանուր կանոն, ժամկետը, որի ընթացքում քննախումբն անցկացնում է իր քննությունը՝ սկսած քննախմբի կազմն ու գործունեության նկարագիրը համաձայնեցնելու օրվանից մինչև վերջնական զեկուցագիրը վեճի կողմերին տրամադրելու օրը, չի գերազանցում վեց ամիսը: Հրատապ դեպքերում, ներառյալ՝ փչացող ապրանքներին վերաբերող դեպքերը, քննախումբը ձգտում է իր զեկուցագիրը վեճի կողմերին տրամադրել երեք ամսվա ընթացքում:

9. Եթե քննախումբը համարում է, որ չի կարող իր զեկուցագիրը թողարկել վեց ամսվա ընթացքում կամ, հրատապ դեպքերում՝ երեք ամսվա ընթացքում, ապա ՎԿՄ-ին գրավոր տեղեկացնում է հետաձգման պատճառների մասին՝ դրա հետ նշելով այն մոտավոր ժամկետը, որի ընթացքում կթողարկի իր զեկուցագիրը: Քննախմբի ստեղծումից մինչև Անդամների միջև զեկուցագրի շրջաբերումն ընկած ժամանակահատվածը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի ինը ամիսը:

10. Չարգացող Անդամ երկրի կողմից ձեռնարկված միջոցի վերաբերող խորհրդակցությունների շրջանակներում կողմերը կարող են համաձայնության գալ 4-րդ Հոդվածի 7-րդ և 8-րդ կետերում սահմանված ժամկետները երկարաձգելու վերաբերյալ: Համապատասխան ժամկետն անցնելուց հետո, եթե խորհրդակցող կողմերը չեն համաձայնում, որ խորհրդակցություններն ավարտվել են, ապա ՎԿՄ-ի Նախագահը՝ կողմերի հետ խորհրդակցելուց հետո որոշում է՝ երկարաձգել, թե ոչ համապատասխան ժամկետը, և եթե այո, ապա ինչքան ժամանակով: Ավելին, զարգացող Անդամ երկրի դեմ բողոքը քննության առնելիս քննախումբը բավականաչափ

ժամանակ է տալիս զարգացող Անդամ երկրին՝ իր փաստարկները պատրաստելու և ներկայացնելու համար: Սույն կետի համաձայն ձեռնարկված որևէ գործողություն չի ազդում 20-րդ Հոդվածի 1-ին կետի և 21-րդ Հոդվածի 4-րդ կետի դրույթների վրա:

11. Եթե կողմերից մեկը կամ ավելին զարգացող Անդամ երկիր է, ապա քննախմբի զեկուցագիրը հստակորեն մատնանշում է այն ձևը, որով հաշվի են առնվել ընդգրկված համաձայնագրերի մաս կազմող, զարգացող Անդամ երկրների նկատմամբ տարբերակված և առավել բարենպաստ մոտեցման վերաբերյալ դրույթները, որոնք վեճի կարգավորման ընթացակարգերի ընթացքում բարձրացվել են զարգացող Անդամ երկրի կողմից:

12. Քննախումբը բողոքող կողմի պահանջով կարող է ցանկացած պահի իր աշխատանքը հետաձգել 12 ամիսը չգերազանցող ժամանակով: Այդպիսի հետաձգման դեպքում սույն Հոդվածի 8-րդ և 9-րդ կետերում, 20-րդ Հոդվածի 1-ին կետում և 21-րդ Հոդվածի 4-րդ կետում նշված ժամկետները երկարաձգվում են այնքան ժամանակով, որքանով որ աշխատանքը հետաձգվել է: Եթե քննախմբի աշխատանքը հետաձգվում է ավելի, քան 12 ամսով, ապա քննախմբի ստեղծման լիազորությունն ուժը կորցնում է:

Հոդված 13. Տեղեկություն ձեռք բերելու իրավունքը

1. Յուրաքանչյուր քննախումբ իրավունք ունի տեղեկություն և խորհուրդ ձեռք բերելու ցանկացած անձից կամ մարմնից, որ ինքը նպատակահարմար կհամարի: Այնուամենայնիվ, նախքան Անդամի իրավասության շրջանակներում գտնվող անձից կամ մարմնից տեղեկություն կամ խորհուրդ ձեռք բերելը քննախումբն այդ մասին տեղեկացնում է այդ Անդամի իրավասու մարմնին: Անդամը պետք է շտապ կարգով և լիարժեքորեն պատասխանի քննախմբի կողմից անհրաժեշտ ու նպատակահարմար համարվող տեղեկության համար ներկայացված ցանկացած պահանջին: Տրամադրված գաղտնի տեղեկությունները դուրս չեն տրվում առանց տեղեկությունը տրամադրող անձի, մարմնի կամ Անդամի իրավասու մարմնի պաշտոնական թույլտվության:

2. Քննախումբը կարող է տեղեկություն ձեռք բերել ցանկացած համապատասխան աղբյուրից և կարող է խորհրդակցել փորձագետների հետ՝ հարցի առանձին ոլորտների վերաբերյալ նրանց կարծիքն իմանալու համար: Վեճի կողմի բարձրացրած գիտական կամ այլ տեխնիկական բնույթի փաստական հարցի կապակցությամբ՝ քննախումբը կարող է փորձագիտական վերաքննության խմբից գրավոր խորհրդատվական զեկուցագիր պահանջել: Այդպիսի խմբի ստեղծման կանոնները և դրա ընթացակարգերը սահմանված են 4-րդ Լրացման մեջ:

Հոդված 14. Գաղտնիություն

1. Քննախմբի քննարկումները գաղտնի են:

2. Քննախմբերի զեկուցագրերը մշակվում են առանց վեճի կողմերի ներկայության՝ ելնելով տրամադրված տեղեկություններից ու կատարված հայտարարություններից:

3. Քննախմբի առանձին անդամների կողմից քննախմբի զեկուցագրում արտահայտված կարծիքներն անանուն են:

Հոդված 15. Միջանկյալ վերաքննության փուլ

1. Ներկայացված հակադիր նյութերն ու բանավոր փաստարկները քննարկելուց հետո Քննախումբը վեճի կողմերի համար հրապարակում է իր զեկուցագրի նախագծի նկարագրական (փաստերի և փաստարկների) բաժինները: Կողմերը իրենց գրավոր դիտողությունները ներկայացնում են քննախմբի կողմից սահմանված ժամկետում:

2. Վեճի կողմերի դիտողությունները ստանալու համար սահմանված ժամկետը սպառվելուց հետո քննախումբը կողմերի համար հրապարակում է միջանկյալ զեկուցագիր, որը ներառում է և նկարագրական բաժինները, և քննախմբի հայտնաբերումներն ու եզրակացությունները: Քննախմբի կողմից սահմանված ժամկետում կողմը կարող է գրավոր պահանջ ներկայացնել, որ քննախումբը, նախքան վերջնական զեկուցագիրը Անդամներին շրջաբերելը, վերաքննի միջանկյալ զեկուցագրի ճշգրիտ բնագավառները: Կողմի պահանջով Քննախումբը հետագա հանդիպում է անցկացնում կողմերի հետ՝ գրավոր դիտողություններում հատկորոշված հարցերի վերաբերյալ: Դիտողությունների համար սահմանված ժամկետում եթե որևէ կողմից դիտողություններ չեն ստացվում, ապա միջանկյալ զեկուցագիրը համարվում է քննախմբի վերջնական զեկուցագիր և շտապ կարգով շրջաբերվում է Անդամներին:

3. Քննախմբի վերջնական զեկուցագրի հայտնաբերումներում ներառվում է միջանկյալ վերաքննության փուլում բերված փաստարկների քննարկումը: Միջանկյալ վերաքննության փուլն անցկացվում է 12-րդ Հոդվածի 8-րդ կետում սահմանված ժամկետի ընթացքում:

Հոդված 16. Քննախմբի գեկուցագրերի ընդունում

1. Որպեսզի Անդամներին բավականաչափ ժամանակ տրվի քննախմբի գեկուցագրերը քննարկելու համար, ՎԿՄ-ի կողմից գեկուցագրերը չեն քննարկվում ընդունելու նպատակով՝ դրանք Անդամներին շրջաբերելուց հետո 20 օրվա ընթացքում:

2. Այն Անդամները, որոնք առարկություններ ունեն քննախմբի գեկուցագրի վերաբերյալ, ՎԿՄ-ի ժողովից, որի ժամանակ կքննարկվի քննախմբի գեկուցագիրը, առնվազն 10 օր առաջ՝ շրջաբերելու համար գրավոր ներկայացնում են իրենց առարկությունների պատճառները:

3. Վեճի կողմերն իրավունք ունեն լիարժեք մասնակել ՎԿՄ-ի կողմից քննախմբի գեկուցագրի քննարկմանը, և նրանց տեսակետներն ամբողջությամբ արձանագրվում են:

4. Քննախմբի գեկուցագիրն Անդամներին շրջաբերելու օրվանից հետո 60 օրվա ընթացքում, գեկուցագիրն ընդունվում է ՎԿՄ-ի ժողովի ժամանակ⁷, եթե վեճի որևէ կողմ ՎԿՄ-ին պաշտոնապես չի ծանուցում բողոքարկելու իր որոշման մասին, կամ ՎԿՄ-ն ընդհանուր համաձայնությամբ չի որոշում չընդունել գեկուցագիրը: Եթե որևէ կողմ ծանուցել է բողոքարկելու իր որոշման մասին, ապա ՎԿՄ-ի կողմից քննախմբի գեկուցագիրը չի քննարկվում ընդունելու նպատակով՝ մինչև բողոքարկման ավարտը: Ընդունման սույն ընթացակարգը չի վնասում քննախմբի գեկուցագրի վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու՝ Անդամների իրավունքը:

Հոդված 17. Բողոքարկման վերաքննություն

Բողոքարկման մշտական մարմին

1. ՎԿՄ-ի կողմից ստեղծվում է Բողոքարկման մշտական մարմին: Բողոքարկման մարմինը լսում է քննախմբի գործերի վերաբերյալ բողոքները: Այն կազմված է յոթ հոգուց, որոնցից երեքը մասնակցում են ցանկացած գործի: Բողոքարկման մարմնում անձինք ծառայում են շրջափոխությամբ: Այդ շրջափոխությունը սահմանվում է Բողոքարկման մարմնի աշխատանքային ընթացակարգերով:

2. Բողոքարկման մարմնում ծառայելու համար անձինք նշանակվում են ՎԿՄ-ի կողմից՝ չորս տարի ժամկետով, և յուրաքանչյուր անձ կարող է վերանշանակվել մեկ անգամ: Այնուամենայնիվ ԱՀԿ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո նշանակված յոթ անձանցից վիճակահանությամբ որոշվող երեքի ժամկետը սպառվում է երկու տարի հետո: Բացվող թափուր տեղերն զբաղեցվում են: Անձը, որը նշանակվում է փոխարինելու այն անձին, որի պաշտոնավարման ժամկետը չի սպառվել, պաշտոնը զբաղեցնում է նախորդի ժամկետից մնացած ժամանակով:

3. Բողոքարկման մարմինը կազմվում է ճանաչված հեղինակություն ունեցող անձանցից, որոնք փորձագիտական կարողություններ են հանդես բերել իրավունքի, միջազգային առևտրի և ընդհանրապես ընդգրկված համաձայնագրերի բովանդակյալ նյութերի ոլորտներում: Նրանք փոխկապակցված չպետք է լինեն որևէ կառավարության հետ: ԱՀԿ անդամները պետք է լայնորեն ներկայացված լինեն բողոքարկման մարմնում: Բողոքարկման մարմնում ծառայող բոլոր անձինք պետք է ցանկացած ժամանակ և անհապաղ մատչելի լինեն, և պետք է վեճերի կարգավորման գործերի և ԱՀԿ-ի այլ առնչվող գործերի ընթացքի մեջ լինեն: Նրանք չեն մասնակցում այն վեճերի քննարկումներին, որոնցով շահերի ուղղակի կամ անուղղակի բախում կառաջանա:

4. Վեճի՝ միայն երրորդ կողմ չհանդիսացող կողմերը կարող են բողոքարկել քննախմբի գեկուցագիրը: Այն երրորդ կողմերը, որոնք համաձայն 10-րդ Հոդվածի 2-րդ կետի ՎԿՄ-ին ծանուցում են ներկայացրել հարցի մեջ էական շահագրգռություն մասին, կարող են գրավոր նյութեր ներկայացնել Բողոքարկման մարմնին և ունկնդրվելու հնարավորություն ստանալ դրա կողմից:

5. Որպես ընդհանուր կանոն՝ գործերի վարույթի տևողությունը՝ սկսած այն օրվանից, երբ վեճի կողմը պաշտոնապես ծանուցում է բողոքարկելու իր որոշման մասին, մինչև այն օրը, երբ Բողոքարկման մարմինը շրջաբերում է իր գեկուցագիրը, չի գերազանցում 60 օրը: Իր ժամանակացույցը հաստատելիս Բողոքարկման մարմինը հաշվի է առնում 4-րդ Հոդվածի 9-րդ կետի դրույթները, եթե դրանք առնչվում են գործին: Եթե Բողոքարկման մարմինը համարում է, որ չի կարող իր գեկուցագիրը տրամադրել 60 օրվա ընթացքում, ապա ՎԿՄ-ին գրավոր տեղեկացնում է հետաձգման պատճառների մասին՝ դրա հետ նշելով այն մտավոր ժամկետը, որի ընթացքում կտրամադրի իր գեկուցագիրը: Գործերի վարման տևողությունը ոչ մի դեպքում չի կարող գերազանցել 90 օրը:

6. Բողոքարկումը սահմանափակվում է քննախմբի գեկուցագրում ընդգրկված իրավական հարցերով և քննախմբի կողմից տրված իրավաբանական մեկնաբանություններով:

7. Բողոքարկման մարմնին տրամադրվում է նրա կողմից պահանջվող համապատասխան վարչական և իրավաբանական աջակցություն:

⁷ Եթե այս ժամանակահատվածի ընթացքում ՎԿՄ-ի ժողով չի նախատեսվում այնպիսի ժամանակում, որը հնարավորություն կտա կատարելու 16-րդ Հոդվածի 1-ին և 4-րդ կետերի պահանջները, ապա ՎԿՄ-ի ժողով է գումարվում այս նպատակով:

8. Բողոքարկման մարմնում ծառայող անձանց ծախսերը, ներառյալ՝ ճամփորդական ծախսերը և օրապահիկը, ծածկվում են ԱՀԿ բյուջեից՝ համաձայն Գլխավոր խորհրդի կողմից՝ Բյուջետային, ֆինանսական և վարչական հարցերով հանձնախմբի առաջարկության հիման վրա ընդունվելիք չափանիշների:

Բողոքարկումների վերաքննության ընթացակարգեր

9. Բողոքարկման մարմինը մշակում է աշխատանքային ընթացակարգեր՝ խորհրդակցելով ՎԿՄ-ի Նախագահի և Գլխավոր տնօրենի հետ, և դրանց մասին հաղորդում է Անդամներին՝ ի գիտություն:

10. Բողոքարկման մարմնի վարույթները գաղտնի են: Բողոքարկման մարմնի զեկուցագրերը մշակվում են առանց վեճի կողմերի ներկայության՝ ելնելով տրամադրված տեղեկություններից ու կատարված հայտարարություններից:

11. Բողոքարկման մարմնի զեկուցագում Բողոքարկման մարմնում ծառայող անձանց կողմից արտահայտված կարծիքներն անանուն են:

12. Բողոքարկման մարմինը անդրադառնում է բողոքարկման գործերի վարման ընթացքում կես 6-ի համաձայն բարձրացված յուրաքանչյուր հարցի:

13. Բողոքարկման մարմինը կարող է պաշտպանել, փոփոխել կամ չեղյալ հայտարարել քննախմբի իրավական հայտնաբերումներն ու եզրակացությունները:

Բողոքարկման մարմնի զեկուցագրերի ընդունումը

14. Բողոքարկման մարմնի զեկուցագիրը հաստատվում է ՎԿՄ-ի կողմից և առանց պայմանների ընդունվում է վեճերի կողմերի կողմից, եթե ՎԿՄ-ն՝ Բողոքարկման մարմնի զեկուցագիրն Անդամների միջև շրջաբերելուց հետո 30 օրվա ընթացքում ընդհանուր համաձայնությամբ չի որոշում չընդունել այն⁸: Ընդունման սույն ընթացակարգը չի վնասում Բողոքարկման մարմնի զեկուցագրի վերաբերյալ իրենց տեսակետներն արտահայտելու՝ Անդամների իրավունքը:

Հոդված 18. Քննախմբի և Բողոքարկման մարմնի հետ հաղորդակցություն

1. Քննախմբի կամ Բողոքարկման մարմնի հետ առանց մյուս կողմերի իմացության հաղորդակցություն չի կատարվում Քննախմբի կամ Բողոքարկման մարմնի կողմից քննարկվող հարցերի առնչությամբ:

2. Քննախմբին կամ Բողոքարկման մարմնին ներկայացված նյութերը դիտարկվում են որպես գաղտնի, բայց մատչելի են դարձվում վեճի կողմերի համար: Սույն Փոխհամաձայնությունը վեճի կողմին ոչ մի կերպ չի արգելում հանրության համար բացահայտել իր սեփական դիրքորոշման դրույթները: Անդամները ու պաշտպանները չեն վերաբերվում մեկ այլ Անդամի կողմից Քննախմբին կամ Բողոքարկման մարմնին ներկայացված տեղեկությանը, որն այդ Անդամի կողմից հատկորոշվել է որպես գաղտնի: Անդամի պահանջով վեճի կողմն իր ներկայացրած գրավոր նյութերում պարունակվող տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփագիր է տրամադրում, որը կարող է բացահայտվել հանրությանը:

Հոդված 19. Քննախմբի և Բողոքարկման մարմնի հանձնարարականներ

1. Եթե Քննախումբը կամ Բողոքարկման մարմինը եզրակացնում է, որ միջոցը չի համապատասխանում ընդգրկված համաձայնագրին, ապա հանձնարարում է, որ տվյալ Անդամը⁹ միջոցը համապատասխանեցնի այդ համաձայնագրին¹⁰: Ի լրումն իր հանձնարարականների Քննախումբը կամ Բողոքարկման մարմինը կարող է ճանապարհներ հուշել, որոնցով տվյալ Անդամը կարող է իրականացնել հանձնարարականները:

2. Համաձայն 3-րդ Հոդվածի 2-րդ կետի, Քննախումբն ու Բողոքարկման մարմինը չեն կարող իրենց հայտնաբերումներով կամ հանձնարարականներով ավելացնել կամ նվազեցնել ընդգրկված համաձայնագրերով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները:

Հոդված 20. ՎԿՄ-ի որոշումների ժամանակացույց

Եթե վեճի կողմերը համաձայնության չեն գալիս այլ բանի շուրջ, ապա, որպես ընդհանուր կանոն, ՎԿՄ-ի

⁸ Եթե ՎԿՄ-ի ժողով չի նախատեսվում, այս ժամանակահատվածի ընթացքում, ապա ՎԿՄ-ի այդպիսի ժողով է գումարվում այս նպատակով:

⁹ «Տվյալ Անդամը» վեճի այն կողմն է, որին ուղղված են քննախմբի կամ բողոքարկման մարմնի հանձնարարականները:

¹⁰ ՄԱԳ-Հ-1994-ի կամ որևէ ընդգրկված համաձայնագրի հետ չառնչվող դեպքերում եղած հանձնարարականների մասով՝ տես 26-րդ Հոդվածը:

կողմից քննախմբի ստեղծման օրվանից մինչև քննախմբի կամ բողոքարկման մարմնի ընդունվելիք զեկուցագրի՝ ՎԿՄ-ի կողմից քննարկման օրն ընկած ժամանակահատվածը քննախմբի զեկուցագիրը չբողոքարկելու դեպքում չի գերազանցում ինն ամիսը, իսկ քննախմբի զեկուցագիրը բողոքարկելու դեպքում՝ 12 ամիսը: Երբ քննախմբը կամ բողոքարկման մարմինը, գործելով 12-րդ Հոդվածի 9-րդ կետի կամ 17-րդ Հոդվածի 5-րդ կետի համաձայն, երկարացնում է իր զեկուցագրի տրամադրման ժամկետը, ավելացված ժամանակը հավելվում է վերը նշված ժամկետներին:

Հոդված 21. Առաջարկությունների և վճիռների իրականացման հսկողություն

1. ՎԿՄ-ի հանձնարարականների կամ վճիռների հետ յուրաժամանակ համապատասխանեցումն էական է հօգուտ բոլոր Անդամների՝ վեճերի արդյունավետ լուծում ապահովելու համար:

2. Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող Անդամ երկրների շահերի վրա ազդեցություն ունեցող հարցերին՝ կապված վեճի կարգավորման առարկա հանդիսացող միջոցների հետ:

3. Քննախմբի կամ Բողոքարկման մարմնի զեկուցագրի ընդունումից հետո 30 օրվա ընթացքում անցկացված՝ ՎԿՄ-ի ժողովի ժամանակ¹¹, խնդրո առարկա Անդամը տեղեկացնում է ՎԿՄ-ի հանձնարարականների ու վճիռների իրականացման կապակցությամբ իր մտադրությունների մասին: Եթե հնարավոր չէ հանձնարարականներն ու վճիռները կատարել անմիջապես, ապա տվյալ Անդամին պատշաճ ժամանակահատված է տրվում այդ անելու համար: Պատշաճ է համարվում.

ա) տվյալ Անդամի կողմից առաջարկված ժամանակահատվածը, եթե այդ ժամանակահատվածը հաստատվում է ՎԿՄ-ի կողմից, կամ այդպիսի հաստատման բացակայության դեպքում՝

բ) վեճի կողմերի կողմից հանձնարարականների ու վճիռների ընդունման օրվանից հետո 45 օրվա ընթացքում փոխհամաձայնեցված ժամանակահատվածը, կամ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում՝

գ) հանձնարարականների ու վճիռների ընդունման օրվանից հետո 90 օրվա ընթացքում միջնորդ դատարանի կապող վճռով որոշված ժամանակահատվածը¹²: Այդպիսի միջնորդ դատավարության ժամանակ միջնորդ դատավորի¹³ համար ուղեցույց պետք է լինի այն, որ քննախմբի կամ Բողոքարկման մարմնի հանձնարարականների իրականացման համար պատշաճ ժամանակահատվածը չպետք է գերազանցի 15 ամիսը՝ սկսած քննախմբի կամ Բողոքարկման մարմնի զեկուցագրի ընդունման օրվանից: Սակայն այդ ժամանակը կարող է ավելի երկար կամ ավելի կարճ լինել՝ կախված առանձին հանգամանքներից:

4. Բացի այն դեպքերից, երբ քննախմբը կամ Բողոքարկման մարմինը երկարացրել է իր զեկուցագրի տրամադրման ժամկետը համաձայն 12-րդ Հոդվածի 9-րդ կետի կամ 17-րդ Հոդվածի 5-րդ կետի, ՎԿՄ-ի կողմից քննախմբի ստեղծման օրվանից մինչև պատշաճ ժամանակահատվածի որոշման օրն ընկած ժամանակը չի գերազանցում 15 ամիսը, եթե վեճի կողմերը համաձայնության չեն գալիս այլ բանի շուրջ: Եթե քննախմբը կամ էլ Բողոքարկման մարմինը գործողություն է ձեռնարկել իրենց զեկուցագրի տրամադրման ժամկետը երկարացնելու համար, ապա լրացուցիչ ժամանակն ավելացվում է 15-ամսյա ժամանակահատվածին՝ պայմանով, որ եթե վեճի կողմերը համաձայնում են, որ առկա են բացառիկ հանգամանքներ, ապա ընդհանուր ժամանակը չի գերազանցում 18 ամիսը:

5. Եթե առկա է անհամաձայնություն հանձնարարականների ու վճիռների կատարման համար ձեռնարկված միջոցների գոյության կամ ընդգրկված համաձայնագրի հետ դրանց համապատասխանության վերաբերյալ, ապա այդ վեճը որոշվում է վեճերի կարգավորման սույն ընթացակարգերին դիմելու միջոցով, ներառյալ՝ սկզբնական քննախմբին դիմելը, երբ դա հնարավոր է: Քննախմբն իր զեկուցագիրը շրջաբերում է հարցն իրեն ներկայացնելու օրվանից հետո 90 օրվա ընթացքում: Եթե քննախմբը համարում է, որ չի կարող իր զեկուցագիրը ներկայացնել այս ժամկետում, ապա այն ՎԿՄ-ին գրավոր տեղեկացնում է հետաձգման պատճառների մասին՝ դրա հետ նշելով այն մտավոր ժամկետը, որի ընթացքում կտրամադրի իր զեկուցագիրը:

6. ՎԿՄ-ն հսկողության տակ է պահում ընդունված հանձնարարականների կամ վճիռների իրականացումը: Ցանկացած Անդամ կարող է հանձնարարականների կամ վճիռների իրականացման հարցը բարձրացնել ՎԿՄ-ում՝ դրանց ընդունումից հետո՝ ցանկացած ժամանակ: Կետ 3-ի համաձայն պատշաճ ժամանակահատվածի սահմանման օրվանից վեց ամիս հետո հանձնարարականների կամ վճիռների իրականացման հարցը դրվում է ՎԿՄ-ի ժողովի օրակարգում և մնում է ՎԿՄ-ի օրակարգում մինչև հարցը լուծվելը, եթե ՎԿՄ-ն այլ բան չի որոշում: ՎԿՄ-ի յուրաքանչյուր այդպիսի ժողովից առնվազն 10 օր առաջ տվյալ Անդամը ՎԿՄ-ին տրամադրում է գրավոր

¹¹ Եթե այս ժամանակահատվածի ընթացքում ՎԿՄ-ի ժողով չի նախատեսվում, ապա ՎԿՄ-ի այդպիսի ժողով է գումարվում այս նպատակով:

¹² Եթե գործը միջնորդ դատարան ներկայացնելուց հետո՝ 10 օրվա ընթացքում կողմերը համաձայնության չեն գալիս միջնորդ դատարանի շուրջ, ապա Գլխավոր տնօրենը կողմերի հետ խորհրդակցելուց հետո՝ 10 օրվա ընթացքում նշանակում է միջնորդ դատարանին:

¹³ «Միջնորդ դատավոր» արտահայտությունը մեկնաբանվում է որպես անհատի կամ խմբի վերաբերող:

տեղեկանք հանձնարարականների կամ վճիռների իրականացման գործում իր կատարած առաջընթացի մասին:

7. Եթե տվյալ հարցը բարձրացրել է զարգացող Անդամ-երկիր, ապա ՎԿՄ-ն քննարկում է, թե հանգամանքներին համապատասխանող հետագա ինչ գործողություն կարող էր ինքը ձեռնարկել:

8. Եթե տվյալ գործը ներկայացրել է զարգացող Անդամ-երկիր, ապա ՎԿՄ-ն ձեռնարկվելիք համապատասխան գործողությունները քննարկելիս հաշվի է առնում ոչ միայն բողոքի ենթակա միջոցների առևտրային ընդգրկումը, այլ նաև տվյալ զարգացող Անդամ-երկրի տնտեսության վրա դրանց ունեցած ազդեցությունը:

Հոդված 22. Փոխհատուցում և զիջումների ժամանակավոր դադարեցում

1. Փոխհատուցումն ու զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցումը ժամանակավոր միջոցներ են, որոնք մատչելի են այն դեպքերում, երբ հանձնարարականներն ու վճիռները չեն իրականացվում պատշաճ ժամանակահատվածի ընթացքում: Այնուամենայնիվ, ոչ փոխհատուցումը և ոչ էլ զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցումը գերադասելի չեն, քան ընդգրկված համաձայնագրի հետ միջոցի համապատասխանեցման համար առաջարկության լիարժեք իրականացումը: Փոխհատուցումը կամավոր է, և շնորհվելու դեպքում պետք է համապատասխանության մեջ լինի ընդգրկված համաձայնագրի հետ:

2. Եթե տվյալ Անդամն ընդգրկված համաձայնագրին անհամապատասխան համարվող միջոցը չի համապատասխանեցնում դրա հետ կամ, այլապես, 21-րդ Հոդվածի 3-րդ կետի համաձայն որոշված պատշաճ ժամանակահատվածի ընթացքում չի կատարում հանձնարարականներն ու վճիռները, ապա այդ Անդամը, պահանջ ներկայացվելու դեպքում և ոչ ուշ, քան պատշաճ ժամանակահատվածի ավարտը, բանակցություններ է սկսում վեճերի կարգավորման ընթացակարգերին դիմած ցանկացած կողմի հետ՝ նպատակ ունենալով հասնել փոխադարձ ընդունելի փոխհատուցման: Եթե պատշաճ ժամանակահատվածի ավարտից հետո՝ 20 օրվա ընթացքում ձեռք չի բերվում համաձայնություն բավարար փոխհատուցման շուրջ, ապա վեճերի կարգավորման ընթացակարգերին դիմած ցանկացած կողմ կարող է ՎԿՄ-ից պահանջել թույլտվություն՝ տվյալ Անդամի նկատմամբ ժամանակավորապես դադարեցնելու ընդգրկված համաձայնագրով սահմանված զիջումների կամ այլ պարտավորությունների կիրառումը:

3. Որոշելու համար, թե ինչպիսի զիջումներ կամ այլ պարտավորություններ ժամանակավորապես դադարեցվեն, բողոքող կողմը կիրառում է հետևյալ սկզբունքները և ընթացակարգերը.

ա) հիմնական սկզբունքն այն է, որ բողոքող կողմը նախ պետք է ձգտի ժամանակավորապես դադարեցնելու զիջումներ կամ այլ պարտավորություններ այն նույն ճյուղերում, որոնցում քննախումբը կամ Բողոքարկման մարմինը պարզել են, որ առկա է խախտում կամ այլ վերացում կամ նվազեցում.

բ) եթե այդ կողմը համարում է, որ հնարավոր չէ կամ արդյունավետ չէ ժամանակավորապես դադարեցնել զիջումներ կամ այլ պարտավորություններ նույն ճյուղերում, ապա կարող է ձգտել ժամանակավորապես դադարեցնելու զիջումներ կամ այլ պարտավորություններ նույն համաձայնագրի այլ ճյուղերում.

գ) եթե այդ կողմը համարում է, որ հնարավոր չէ կամ արդյունավետ չէ ժամանակավորապես դադարեցնել զիջումներ կամ այլ պարտավորություններ նույն համաձայնագրի այլ ճյուղերում, և հանգամանքները բավական լուրջ են, ապա կարող է ձգտել ժամանակավորապես դադարեցնելու մեկ այլ ընդգրկված համաձայնագրով սահմանված զիջումներ կամ այլ պարտավորություններ.

դ) վերոհիշյալ սկզբունքները կիրառելիս այդ կողմը հաշվի է առնում.

i) առևտուրն այն ճյուղում կամ այն համաձայնագրի շրջանակներում, որի համաձայն քննախումբը կամ Բողոքարկման մարմինը պարզել են, որ առկա է խախտում կամ այլ վերացում կամ նվազեցում, և այդ առևտրի կարևորությունն այդ կողմի համար.

ii) վերացման կամ նվազեցման հետ կապված ավելի լայն տնտեսական տարրերն ու զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցման ավելի լայն տնտեսական հետևանքները.

ե) եթե կողմը որոշում է զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավորապես դադարեցման թույլտվություն պահանջել համաձայն «բ» և «գ» ենթակետերի, ապա իր պահանջում նշում է դրա պատճառները: Պահանջը ՎԿՄ ուղարկվելու հետ միաժամանակ ուղարկվում է նաև համապատասխան Խորհուրդներին և, «բ» ենթակետի համաձայն պահանջ ներկայացվելու դեպքում, նաև համապատասխան ճյուղային մարմիններին.

զ) սույն կետի նպատակներով «ճյուղը» նշանակում է.

i) ապրանքների մասով՝ բոլոր ապրանքները.

ii) ծառայությունների մասով՝ հիմնական բնագավառ, որը հատկորոշված է այդպիսի

բնագավառները հատկորոշող՝ գործող «Ծառայությունների՝ ըստ բնագավառների դասակարգման ցանկով»¹⁴.

iii) մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող մասով՝ ՄՄԱԱ համաձայնագրի II Բաժնի 1-ին Գլխում կամ 2-րդ Գլխում կամ 3-րդ Գլխում կամ 4-րդ Գլխում կամ 5-րդ Գլխում կամ 6-րդ Գլխում կամ 7-րդ Գլխում ընդգրկված մտավոր սեփականության իրավունքների տեսակներից յուրաքանչյուրը, կամ III Բաժնով կամ IV Բաժնով սահմանված պարտավորությունները.

է) սույն կետի նպատակներով «համաձայնագիրը» նշանակում է.

i) ապրանքների մասով՝ ԱՀԿ համաձայնագրի IU Հավելվածում թվարկված համաձայնագրերը՝ որպես ամբողջություն, ինչպես նաև Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերն այնքանով, որքանով որ վեճի համապատասխան կողմերը մասնակից են այդ համաձայնագրերին.

ii) ծառայությունների մասով՝ ԾԱԳՀ-ն.

iii) մտավոր սեփականության իրավունքների մասով՝ ՄՄԱԱ համաձայնագիրը:

4. ՎԿՄ-ի թույլատրած զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցման մակարդակը համարժեք պետք է լինի վերացման կամ նվազեցման մակարդակին:

5. ՎԿՄ-ն զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցում չի թույլատրում, եթե ընդգրկված համաձայնագրով այդպիսի ժամանակավոր դադարեցումն արգելվում է:

6. Եթե ստեղծվում է 2-րդ կետում նկարագրված իրավիճակ, ապա ՎԿՄ-ն պահանջ ներկայացվելու դեպքում զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցման թույլտվություն է տալիս պատշաճ ժամանակահատվածի ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, եթե ՎԿՄ-ն ընդհանուր համաձայնությամբ չի որոշում մերժել պահանջը: Սակայն եթե տվյալ Անդամն առարկում է առաջարկված ժամանակավոր դադարեցման մակարդակին կամ պնդում է, որ 3-րդ կետում շարադրված սկզբունքները չեն պահպանվել, երբ բողոքող կողմը զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցման համար թույլտվություն է պահանջել համաձայն 3«բ» կամ 3«գ» կետերի, ապա հարցն ուղարկվում է միջնորդ դատավարության: Այդպիսի միջնորդ դատավարությունն անցկացնում է սկզբնական քննախումբը, եթե անդամները տեղում են, կամ Գլխավոր տնօրենի նշանակած միջնորդ դատավորը¹⁵, և այն ավարտվում է պատշաճ ժամանակահատվածի ավարտից հետո 60 օրվա ընթացքում: Միջնորդ դատավարության ընթացքում զիջումները և այլ պարտավորությունները ժամանակավորապես չեն դադարեցվում:

7. Կետ 6-ի համաձայն գործող միջնորդ դատավորը¹⁶ քննության չի առնում ժամանակավոր դադարեցման ենթակա զիջումների կամ այլ պարտավորությունների բնույթը, այլ որոշում է այդ ժամանակավոր դադարեցման մակարդակի համարժեքությունը վերացման կամ նվազեցման մակարդակին: Միջնորդ դատավորը կարող է նաև որոշել՝ թույլատրվում է արդյոք զիջումների կամ այլ պարտավորությունների առաջարկվող ժամանակավոր դադարեցումն ընդգրկված համաձայնագրով: Այնուամենայնիվ եթե միջնորդ դատավարության ներկայացված հարցը պարունակում է բողոք առ այն, որ չեն պահպանվել 3-րդ կետում շարադրված սկզբունքները, ապա միջնորդ դատավորը քննության է առնում այդ բողոքը: Այն դեպքում, երբ միջնորդ դատավորը որոշում է, որ այդ սկզբունքներն ու ընթացակարգերը չեն պահպանվել, բողոքող կողմը դրանք կիրառում է կետ 3-ին համապատասխան: Կողմերը միջնորդ դատավորի որոշումն ընդունում են որպես վերջնական, և խնդրո առարկա կողմերը երկրորդ անգամ միջնորդ դատավարության չեն դիմում: ՎԿՄ-ն շտապ տեղեկացվում է միջնորդ դատավորի որոշման մասին և, պահանջ լինելու դեպքում, եթե պահանջը համապատասխան է միջնորդ դատավորի որոշմանը, թույլատրում է ժամանակավորապես դադարեցնել զիջումներ կամ այլ պարտավորություններ, եթե ՎԿՄ-ն ընդհանուր համաձայնությամբ չի որոշում մերժել պահանջը:

8. Ջիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցումն ունի ժամանակավոր բնույթ և կիրառվում է միայն մինչև ընդգրկված համաձայնագրին անհամապատասխան համարվող միջոցի վերացումը, կամ մինչև որ Անդամը, որը պետք է իրականացնի հանձնարարականներն ու վճիռները, լուծում է տալիս օգուտների վերացման կամ նվազեցման հարցին, կամ մինչև փոխադարձ բավարարող լուծման հասնելը: 21-րդ Հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ՎԿՄ-ն շարունակում է հսկողության տակ պահել ընդունված հանձնարարականների կամ վճիռների իրականացումը, ներառյալ՝ այն դեպքերը, երբ փոխհատուցում է տրամադրվել, կամ զիջումներ կամ այլ պարտավորություններ են ժամանակավորապես դադարեցվել, սակայն չեն իրականացվել ընդգրկված համաձայնագրի հետ միջոցի համապատասխանությունն ապահովելու հանձնարարականները:

9. Ընդգրկված համաձայնագրերի վեճերի կարգավորման վերաբերյալ դրույթները կարող են կիրարկվել

¹⁴ MTN.GNS/W/120 փաստաթղթում պարունակվող ցանկը հատկորոշում է 11 բնագավառներ:

¹⁵ «Միջնորդ դատավոր» արտահայտությունը մեկնաբանվում է որպես անհատի կամ խմբի վերաբերող:

¹⁶ «Միջնորդ դատավոր» արտահայտությունը մեկնաբանվում է որպես անհատի կամ խմբի կամ սկզբնական քննախմբի՝ որպես միջնորդ դատավոր հանդես եկող անդամներին վերաբերող:

դրանց պահպանման վրա ազդող՝ Անդամի տարածքում եղած տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ իրավասու մարմինների ձեռնարկած միջոցների նկատմամբ: Եթե ՎԿՄ-ն վճռում է, որ ընդգրկված համաձայնագրի դրույթը չի պահպանվել, ապա պատասխանատու Անդամը դրա պահպանումն ապահովելու համար ձեռնարկում է այնպիսի պատշաճ միջոցներ, որոնք կարող են մատչելի լինեն իրեն: Ընդգրկված համաձայնագրի և սույն Փոխհամաձայնության՝ փոխհատուցմանը և զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցմանը վերաբերող դրույթները կիրառվում են այն դեպքերում, երբ հնարավոր չի եղել ապահովել այդ պահպանումը¹⁷:

Հոդված 23. Բազմակողմ համակարգի ամրապնդում

1. Եթե Անդամները ցանկանում են փոխհատուցում ստանալ պարտավորությունների խախտման կամ օգուտների՝ այլ վերացման կամ նվազեցման կամ ընդգրկված համաձայնագրերի որևէ նպատակի իրագործումը խոչընդոտելու դիմաց, ապա նրանք դիմում են սույն Փոխհամաձայնության կանոններին ու ընթացակարգերին և պահպանում են դրանք:

2. Այդ դեպքերում Անդամները՝

- ա) եզրակացություն չեն կայացնում առ այն, որ խախտում է կատարվել, օգուտները վերացվել կամ նվազեցվել են, կամ որ ընդգրկված համաձայնագրերի որևէ նպատակի իրագործումը խոչընդոտվել է, բացի երբ դա անում են սույն Փոխհամաձայնության կանոնների և ընթացակարգերի համաձայն վեճերի կարգավորմանը դիմելու միջոցով, և որևէ այդպիսի եզրակացություն կայացնում են քննախմբի կամ Բողոքարկման մարմնի՝ ՎԿՄ-ի կողմից ընդունված զեկուցագրում ընդգրկված հայտնաբերումներին կամ միջնորդ դատարանի՝ սույն Փոխհամաձայնության համաձայն տված որոշման համապատասխան.
- բ) հանձնարարականներն ու վճիռները իրականացնելու համար խնդրո առարկա Անդամին տրվող ժամանակահատվածը որոշելիս հետևում են 21-րդ Հոդվածով սահմանված ընթացակարգերին.
- գ) հետևում են 22-րդ Հոդվածով սահմանված ընթացակարգերին, որպեսզի ի պատասխան այն բանի, որ խնդրո առարկա Անդամն այդ պատշաճ ժամկետում չի կատարում հանձնարարականներն ու վճիռները, որոշեն զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցման մակարդակը և ընդգրկված համաձայնագրերով սահմանված զիջումների կամ այլ պարտավորությունների ժամանակավոր դադարեցումից առաջ՝ այդ ընթացակարգերի համաձայն ձեռք բերեն ՎԿՄ-ի թույլտվությունը:

Հոդված 24. Առավել թույլ զարգացած Անդամներին առնչվող հատուկ ընթացակարգեր

1. Առավել թույլ զարգացած Անդամ երկրի առնչվող վեճի պատճառների որոշման ու վեճի կարգավորման ընթացակարգերի բոլոր փուլերի ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում առավել թույլ զարգացած Անդամ երկրների առանձնահատուկ իրավիճակին: Այս առնչությամբ՝ Անդամները պատշաճ սահմանափակում են կիրարկում, սույն ընթացակարգերի համաձայն, առավել թույլ զարգացած Անդամ երկրի առնչվող հարցեր բարձրացնելիս: Եթե պարզվում է, որ առավել թույլ զարգացած Անդամ երկրի ձեռնարկած միջոցը հանգեցրել է վերացման կամ նվազեցման, ապա բողոքող կողմերը պատշաճ սահմանափակում են կիրարկում՝ փոխհատուցում պահանջելիս կամ սույն ընթացակարգերի համաձայն զիջումների կամ այլ պարտավորությունների կիրառումը ժամանակավորապես դադարեցնելու թույլտվություն ձեռք բերելիս:

2. Առավել թույլ զարգացած Անդամ երկրի առնչվող վեճերի կարգավորման դեպքում, եթե խորհրդակցությունների ընթացքում գոհացուցիչ լուծում չի գտնվել, ապա Գլխավոր տնօրենը կամ ՎԿՄ նախագահը, մինչև քննության համար պահանջ ներկայացնելը, առավել թույլ զարգացած Անդամ երկրի պահանջով, իրենց բարեխիղճ ծառայությունները, հաշտարարությունն ու միջնորդությունն են առաջարկում՝ նպատակ ունենալով կողմերին աջակցել կարգավորելու վեճը: Գլխավոր տնօրենը կամ ՎԿՄ նախագահը վերոնշյալ աջակցությունը տրամադրելիս կարող են խորհրդակցել ցանկացած աղբյուրի հետ, որը նրանցից յուրաքանչյուրը նպատակահարմար է համարում:

Հոդված 25. Միջնորդ դատավարություն

1. ԱՀԿ շրջանակներում արագընթաց միջնորդ դատավարությունը՝ որպես վեճերի կարգավորման այլընտրանքային միջոց, կարող է դյուրինացնել որոշ վեճերի լուծումը, որոնք առնչվում են հարցերի, որոնք

¹⁷ Եթե որևէ ընդգրկված համաձայնագրի՝ Անդամի տարածքում եղած տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ իրավասու մարմինների ձեռնարկած միջոցների վերաբերյալ դրույթները տարբեր են սույն կետի դրույթներից, ապա գերակայում են այդ ընդգրկված համաձայնագրի դրույթները:

հատակորեն սահմանել են երկու կողմերը:

2. Բացառությամբ սույն Փոխհամաձայնությամբ այլ կերպ նախատեսվածի, միջնորդ դատավարության դիմելը ենթակա է կողմերի փոխադարձ համաձայնության, որոնք համաձայնության են գալիս այն ընթացակարգերի շուրջ, որոնց պետք է հետևել: Միջնորդ դատավարության դիմելու համաձայնությունները ծանուցվում են բոլոր Անդամներին՝ միջնորդ դատավարության գործընթացի սկզբից բավականաչափ առաջ:

3. Այլ Անդամներ կարող են միջնորդ դատավարության կողմ դառնալ միայն այն կողմերի համաձայնությամբ, որոնք համաձայնել են դիմել միջնորդ դատավարության: Դատավարության կողմերը համաձայնում են կատարել միջնորդ դատարանի որոշումը: Միջնորդ դատարանի որոշումները ծանուցվում են ՎԿՄ և ցանկացած համապատասխան համաձայնագրի Խորհրդին կամ Հանձնախմբին, որտեղ ցանկացած Անդամ կարող է դրանց հետ կապված հարց բարձրացնել:

4. Սույն Փոխհամաձայնության 21-րդ և 22-րդ Հոդվածները, դրանցում համապատասխան փոփոխություններ կատարելուց հետո, տարածվում են միջնորդ դատարանի որոշումների վրա:

Հոդված 26

1. ՄԱԳ-Հ-1994-ի XXIII Հոդվածի 1«բ» կետում նկարագրված տեսակի՝ առանց խախտման դեպքերին վերաբերող բողոքներ

Եթե ՄԱԳ-Հ-1994-ի XXIII Հոդվածի 1«բ» կետի դրույթները տարածվում են ընդգրկված համաձայնագրի վրա, ապա քննախումբը կամ Բողոքարկման մարմինը կարող է վճիռներ կայացնել կամ հանձնարարականներ տալ միայն, երբ վեճի կողմը համարում է, որ համապատասխան ընդգրկված համաձայնագրով իրեն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասնող որևէ օգուտ վերացվում կամ նվազեցվում է, կամ այդ Համաձայնագրի որևէ նպատակի իրագործումը խոչընդոտվում է Անդամի կողմից որևէ միջոցի կիրառման հետևանքով, անկախ այն բանից՝ դա հակասում է այդ Համաձայնագրի դրույթներին, թե ոչ: Հաշվի առնելով ներքաշարադրյալը՝ սույն Փոխհամաձայնության ընթացակարգերը կիրառվում են այն ժամանակ և այնքանով, որքանով այդ կողմը համարում է, իսկ քննախումբը կամ Բողոքարկման մարմինը որոշում է, որ գործը վերաբերում է մի միջոցի, որը չի հակասում ընդգրկված այն համաձայնագրի դրույթներին, որի վրա տարածվում են ՄԱԳ-Հ-1994-ի XXIII Հոդվածի 1«բ» կետի դրույթները.

- ա) բողոքող կողմը մանրամասն հիմնավորում է ներկայացնում՝ պաշտպանելու համապատասխան ընդգրկված համաձայնագրին չհակասող միջոցի հետ կապված ցանկացած բողոք.
- բ) եթե պարզվում է, որ միջոցը վերացնում կամ նվազեցնում է համապատասխան ընդգրկված համաձայնագրով սահմանված օգուտները, կամ խոչընդոտում է դրա նպատակների իրագործմանը առանց դրան հակասելու, ապա միջոցը դադարեցնելու պարտավորություն չկա: Այնուամենայնիվ այդպիսի դեպքերում քննախումբը կամ Բողոքարկման մարմինն հանձնարարում է, որ խնդր առարկա Անդամը փոխադարձ գոհացուցիչ շտկումներ կատարի.
- գ) անկախ 21-րդ Հոդվածի դրույթներից՝ 21-րդ Հոդվածի 3-րդ կետով նախատեսված միջնորդ դատավարությունը, որևէ կողմի պահանջով, կարող է ընդգրկել վերացված կամ նվազեցված օգուտների մակարդակի որոշումը, և կարող է նաև փոխադարձ գոհացուցիչ շտկումների հասնելու ճանապարհներ ու միջոցներ առաջարկել. այդ առաջարկությունները վեճի կողմերի համար պարտադիր չեն.
- դ) անկախ 22-րդ Հոդվածի 1-ին կետի դրույթներից, որպես վեճի վերջնական կարգավորում՝ փոխադարձ գոհացուցիչ շտկման մաս կարող է լինել փոխհատուցումը:

2. ՄԱԳ-Հ-1994-ի XXIII Հոդվածի 1«գ» կետում նկարագրված տեսակի բողոքներ

Եթե ընդգրկված համաձայնագրի վրա տարածվում են XXIII Հոդվածի 1«գ» կետի դրույթները, ապա քննախումբը վճիռներ ու հանձնարարականներ կարող է տալ միայն, երբ որևէ կողմ համարում է, որ համապատասխան ընդգրկված համաձայնագրով ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրեն հասնող որևէ օգուտ վերացվում կամ նվազեցվում է, կամ այդ Համաձայնագրի որևէ նպատակի իրագործումը խոչընդոտվում է որևէ իրավիճակի առկայության հետևանքով, որն այլ է, քան այն իրավիճակները, որոնց վրա տարածվում են ՄԱԳ-Հ-1994-ի XXIII Հոդվածի 1«ա» և 1«բ» կետերի դրույթները: Այն ժամանակ և այնքանով, որքանով այդ կողմը համարում է, իսկ քննախումբը որոշում է, որ հարցն ընկնում է սույն կետի տակ, սույն Փոխհամաձայնության ընթացակարգերը կիրառվում են միայն մինչև և ներառյալ վարույթի այն կետը, որտեղ քննախմբի զեկուցագիրը շրջաբերվել է Անդամներին: Վեճերի կարգավորման՝ 1989թ. ապրիլի 12-ի Որոշման (BISD 36S/61-67) մեջ պարունակվող կանոններն ու ընթացակարգերը կիրառվում են վճիռների և հանձնարարականների՝ ընդունման համար քննարկման և իրականացման ու հսկողության նկատմամբ: Կիրառվում է նաև հետևյալը.

- ա) բողոքող կողմը մանրամասն հիմնավորում է ներկայացնում՝ պաշտպանելու սույն կետի տակ ընկնող հարցերին առնչվող ցանկացած փաստարկ.
- բ) սույն կետի տակ ընկնող հարցերին վերաբերող դեպքերում, եթե քննախումբը պարզում է, որ դեպքերը վերաբերում են նաև վեճի կարգավորման հարցերի, որոնք սույն կետի տակ չեն ընկնում, ապա քննախումբը զեկուցագիր է շրջաբերում ՎԿՄ-ին, որով հասցեագրվում է ցանկացած այդպիսի հարց, և առանձին զեկուցագիր, որը վերաբերում է սույն կետի տակ ընկնող հարցերին:

Հոդված 27. Քարտուղարության պարտականությունները

1. Քարտուղարության պարտականությունն է քննախմբերին աջակցել հատկապես քննվող հարցերի՝ իրավաբանական, պատմական և ընթացակարգային բնագավառներում և քարտուղարական ու տեխնիկական օժանդակություն տրամադրել:

2. Չնայած Քարտուղարությունն Անդամներին, ըստ նրանց պահանջի, աջակցում է վեճերի կարգավորման հարցում, կարող է նաև կարիք լինել վեճերի կարգավորման հարցում զարգացող Անդամ երկրներին լրացուցիչ իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու: Այս առումով՝ Քարտուղարությունը ԱՀԿ տեխնիկական համագործակցության ծառայություններից որակյալ իրավաբան փորձագետ է հատկացնում ցանկացած զարգացող Անդամ երկրի, որն այդպիսի պահանջ է ներկայացնում: Այդ փորձագետը զարգացող Անդամ երկրին աջակցում է այնպես, որ ապահովվի Քարտուղարության շարունակական անկողմնակալությունը:

3. Քարտուղարությունը շահագրգիռ Անդամների համար անցկացնում է հատուկ ուսուցողական դասընթացներ վեճերի կարգավորման այս ընթացակարգերի ու գործելակերպերի վերաբերյալ այնպես, որ Անդամների փորձագետներին հնարավորություն տրվի ավելի տեղեկացված լինել այդ մասին:

ԼՐԱՅՈՒՄ 1

ՍՈՒՅՆ ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Ա) Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման համաձայնագիր

Բ) Առևտրի բազմակողմ-պարտադիր համաձայնագրեր

Հավելված 1Ա. Ապրանքների առևտրի մասին բազմակողմ-պարտադիր համաձայնագրեր

Հավելված 1Բ. Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիր

Հավելված 1Գ. Ստավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հարցերի մասին համաձայնագիր

Հավելված 2. Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների ու ընթացակարգերի մասին փոխհամաձայնություն

Գ) Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրեր

Հավելված 4. Քաղաքացիական օդագնացության առևտրի մասին համաձայնագիր

Պետական գնումների մասին համաձայնագիր

Կաթնամթերքի մասին միջազգային համաձայնագիր

Տավարի մսի մասին միջազգային համաձայնագիր

Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերի նկատմամբ սույն Համաձայնագրի կիրառելիության մասով յուրաքանչյուր համաձայնագրի կողմերը պետք է ընդունեն որոշում, որով սահմանվում են առանձին համաձայնագրի նկատմամբ Փոխհամաձայնության կիրառման պայմանները, ներառյալ՝ ՎԿՄ-ին ծանուցված որևէ հատուկ կամ լրացուցիչ կանոն կամ ընթացակարգ՝ 2-րդ Լրացման մեջ ընդգրկելու համար:

ԼՐԱՅՈՒՄ 2

ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՄ ԼՐԱՅՈՒՑԻՉ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Համաձայնագիր	Կանոններ և ընթացակարգեր
Մանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին համաձայնագիր	11.2
Մանածագործվածքների և հագուստեղենի մասին համաձայնագիր	2.14, 2.21, 4.4, 5.2, 5.4, 5.6, 6.9, 6.10, 6.11, 8.1-8.12-րդ
Առևտրի տեխնիկական խոչընդոտների մասին համաձայնագիր	14.2-14.4-րդ, Հավելված 2
ՄԱԳ-Հ-1994-ի VI Հոդվածի իրականացման մասին համաձայնագիր	17.4-17.7-րդ
ՄԱԳ-Հ-1994-ի VII Հոդվածի իրականացման մասին համաձայնագիր	19.3-19.5-րդ, Հավելված II.2«գ», 3, 9, 21
Լրավճարների և փոխհատուցման միջոցների մասին համաձայնագիր	4.2-4.12-րդ, 6.6, 7.2-7.10-րդ, 8.5, 35-րդ ծանոթագրություն, 24.4, 27.7, Հավելված V
Ծառայությունների առևտրի մասին գլխավոր համաձայնագիր	XXII.3, XXIII.3
Ֆինանսական ծառայությունների մասին Հավելված	4
Օդային փոխադրման ծառայությունների մասին Հավելված	4
ԾԱԳ-Հ-ի համար՝ Վեճերի կարգավորման որոշ ընթացակարգերի մասին որոշում	1-5-րդ

Սույն Լրացման մեջ եղած կանոնների և ընթացակարգերի ցանկն ընդգրկում է դրույթներ, որտեղ դրույթի միայն որևէ մասը կարող է այս առումով գործին առնչվող լինել:

Առևտրի բազմակողմ-կամավոր համաձայնագրերում՝ յուրաքանչյուր համաձայնագրի իրավասու մարմնի սահմանած ու ՎԿՄ-ին ծանուցված որևէ հատուկ կամ լրացուցիչ կանոն կամ ընթացակարգ:

ԼՐԱՅՈՒՄ 3
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

1. Քննախումբն իր վարույթների ժամանակ հետևում է սույն Փոխահամաձայնության համապատասխան դրույթներին: Ի հավելումն՝ կիրառվում են հետևյալ աշխատանքային ընթացակարգերը:

2. Քննախմբի ժողովներն անցկացվում են դռնփակ նիստերով: Վեճի կողմերն ու շահագրգիռ կողմերը ժողովներին ներկա են լինում միայն, երբ քննախումբը հրավիրում է ներկայանալ:

3. Քննախմբի քննարկումներն ու դրան ներկայացված փաստաթղթերը գաղտնի են պահվում: Սույն Փոխահամաձայնությունը ոչնչով չի արգելում որևէ կողմի՝ հասարակությանը բացահայտելու իր սեփական դիրքորոշման դրույթները: Անդամները որպես գաղտնի են վերաբերվում մեկ այլ Անդամի ներկայացրած այն տեղեկություններին, որոնք այդ Անդամը ցուցանչել է որպես գաղտնի: Եթե վեճի որևէ կողմ ներկայացնում է քննախմբին ներկայացրած իր գրավոր նյութերի գաղտնի տարբերակը, ապա որևէ Անդամի պահանջով տրամադրում է նաև իր ներկայացրած նյութերում պարունակվող տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփագիր, որը կարող է բացահայտվել հասարակությանը:

4. Մինչև կողմերի հետ քննախմբի առաջին հիմնական հանդիպումը վեճի կողմերը քննախմբին են փոխանցում գրավոր նյութեր, որտեղ նրանք ներկայացնում են գործի փաստերը և իրենց փաստարկները:

5. Քննախումբը, կողմերի հետ իր առաջին հիմնական հանդիպման ժամանակ, բողոքը ներկայացնող կողմին հրավիրում է ներկայացնելու իր գործը: Դրանից հետո, և հենց այդ նույն հանդիպման ժամանակ, այն կողմը, որի դեմ ներկայացվել է բողոքը, հրավիրվում է ներկայացնելու իր տեսակետը:

6. Այն բոլոր երրորդ կողմերը, որոնք ՎԿՄ-ին ծանուցել են վեճի մեջ իրենց շահագրգռության մասին, գրավոր հրավիրվում են ներկայացնելու իրենց տեսակետները՝ քննախմբի առաջին հիմնական ժողովի՝ այդ նպատակի համար հատկացված նիստի ընթացքում: Բոլոր այդ երրորդ կողմերը կարող են ներկա լինել այդ նիստի ամբողջ ընթացքին:

7. Պաշտոնական հերքումները կատարվում են քննախմբի երկրորդ հիմնական հանդիպման ժամանակ: Առաջին խոսքի իրավունքն այն կողմինն է, որի դեմ բողոք է ներկայացվել. այնուհետև հերքը բողոքող կողմինն է: Կողմերն այդ ժողովից առաջ քննախմբին են ներկայացնում գրավոր հերքումները:

8. Քննախումբը կարող է ցանկացած ժամանակ կողմերի առաջ հարցեր դնել ու նրանց հրավիրել բացատրություններ տալ՝ կողմերի հետ ժողովի ընթացքում կամ գրավոր:

9. Վեճի կողմերն ու ցանկացած երրորդ կողմ, որը հրավիրվել է իր տեսակետները ներկայացնելու համաձայն 10-րդ Հոդվածի, քննախմբի համար մատչելի են դարձնում իրենց բանավոր ելույթների գրավոր տարբերակները:

10. Ի շահ լիարժեք թափանցիկության, 5-9-րդ կետերում հիշատակվող ներկայացումները, հերքումներն ու ելույթները կատարվում են կողմերի ներկայությամբ: Ավելին, յուրաքանչյուր կողմի ներկայացրած գրավոր նյութերը, ներառյալ՝ զեկուցագրի նկարագրական մասի վերաբերյալ ցանկացած դիտողություններն ու քննախմբի դրած հարցերի պատասխանները մատչելի են դարձվում մյուս կողմին կամ կողմերին:

11. Տվյալ քննախմբին հատուկ ցանկացած լրացուցիչ ընթացակարգ:

12. Քննախմբի աշխատանքի համար առաջարկվող ժամանակացանկ.

- ա) կողմերի ներկայացրած առաջին գրավոր նյութերի ստացումը.
 - 1) բողոքող կողմ՝ 3-6 շաբաթ
 - 2) կողմ, որի դեմ բողոքը ներկայացվել է՝ 2-3 շաբաթ
- բ) կողմերի հետ առաջին հիմնական ժողովի օրը, ժամն ու տեղը՝ երրորդ կողմերի հետ նիստը՝ 1-2 շաբաթ
- գ) կողմերի գրավոր հերքումների ստացումը՝ 2-3 շաբաթ
- դ) կողմերի հետ երկրորդ հիմնական ժողովի օրը, ժամն ու տեղը՝ 1-2 շաբաթ
- ե) զեկուցագրի նկարագրական մասի թողարկումը կողմերին՝ 2-4 շաբաթ
- զ) զեկուցագրի նկարագրական մասի վերաբերյալ կողմերի դիտողությունների ստացումը՝ 2 շաբաթ
- է) միջանկյալ զեկուցագրի (ներառյալ՝ հայտնաբերումներն ու եզրակացությունները) թողարկումը կողմերին՝ 2-4 շաբաթ
- ը) ժամկետ, որպեսզի կողմը զեկուցագրի մասի(երի) վերաքննություն պահանջի՝ 1 շաբաթ
- թ) քննախմբի վերաքննության ժամանակահատվածը, ներառյալ՝ կողմերի հետ հնարավոր լրացուցիչ ժողովը 2 շաբաթ
- ժ) վերջնական զեկուցագրի թողարկումը կողմերին՝ 2 շաբաթ
- Ճա) վերջնական զեկուցագրի շրջաբերումը Անդամներին՝ 3 շաբաթ

Վերոնշյալ օրացույցը կարող է փոփոխվել՝ ելնելով անկանխատեսելի զարգացումներից: Պահանջ լինելու դեպքում ցուցակագրվում են կողմերի հետ լրացուցիչ ժողովներ:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐ

Հետևյալ կանոնները և ընթացակարգերը տարածվում են 13-րդ Հոդվածի 2-րդ կետի դրույթների համաձայն ստեղծված՝ վերաքննիչ փորձագիտական խմբերի վրա:

1. Վերաքննիչ փորձագիտական խմբերը քննախմբի իրավասության ներքո են: Նրանց գործունեության նկարագիրն ու մանրամասն աշխատանքային ընթացակարգերը որոշում է քննախումբը, և նրանք զեկուցում են քննախմբին:

2. Վերաքննիչ փորձագիտական խմբերին մասնակցությունը սահմանափակվում է խնդրո առարկա բնագավառում մասնագիտական որոկավորում և փորձ ունեցող անձանցով:

3. Վեճի կողմերի քաղաքացիները վերաքննիչ փորձագիտական խմբում չեն ծառայում առանց վեճի կողմերի միացյալ համաձայնության, բացառությամբ այն բացառիկ դեպքերի, երբ քննախումբը համարում է, որ նեղ մասնագիտական գիտական փորձագիտության կարիքը չի կարող այլ կերպ բավարարվել: Պետական պաշտոնյաներն ու վեճի կողմերը չեն կարող ծառայել վերաքննիչ փորձագիտական խմբում: Վերաքննիչ փորձագիտական խմբերի անդամները ծառայում են իրենց անձնական իրավասության սահմաններում, այլ ոչ որպես կառավարության ներկայացուցիչներ կամ որևէ կազմակերպության ներկայացուցիչներ: Այդուհանդերձ, կառավարությունները կամ կազմակերպությունները նրանց ցուցումներ չեն տալիս՝ կապված վերաքննիչ փորձագիտական խմբին ներկայացված հարցերի հետ:

4. Վերաքննիչ փորձագիտական խմբերը կարող են խորհրդակցել և տեղեկություններ ու տեխնիկական խորհրդատվություն ձեռք բերել ցանկացած աղբյուրից, որն իրենք նպատակահարմար կգտնեն: Նախքան Անդամի իրավասության տակ գտնվող աղբյուրից այդպիսի տեղեկություններ ու խորհրդատվություն ձեռք բերելը վերաքննիչ փորձագիտական խումբը տեղեկացնում է այդ Անդամին: Ցանկացած Անդամ շտապ կարգով ու լիարժեքորեն պատասխանում է վերաքննիչ փորձագիտական խմբի՝ այնպիսի տեղեկությունների համար ներկայացված ցանկացած պահանջին, ինչպիսիք վերաքննիչ փորձագիտական խումբն անհրաժեշտ ու նպատակահարմար է համարում:

5. Վեճի կողմերը մուտք ունեն դեպի՝ վերաքննիչ փորձագիտական խմբին տրամադրված՝ գործին առնչվող բոլոր տեղեկությունները, եթե դրանք բնույթով գաղմի չեն: Վերաքննիչ փորձագիտական խմբին տրամադրված գաղտնի տեղեկությունները դուրս չեն տրվում առանց տեղեկությունները տրամադրող կառավարության, կազմակերպության կամ անձի պաշտոնական թույլտվության: Եթե այդպիսի տեղեկություններ են պահանջվում վերաքննիչ փորձագիտական խմբից, սակայն վերաքննիչ փորձագիտական խումբն այդ տեղեկությունները դուրս տալու թույլտվություն չունի, ապա այդ տեղեկությունները ներկայացնող կառավարությունը, կազմակերպությունը կամ անձը կտրամադրեն այդ տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփագիր:

6. Վերաքննիչ փորձագիտական խումբը վեճի կողմերին է ներկայացնում զեկուցագրի նախագիծ՝ նպատակ ունենալով ստանալու նրանց դիտողությունները և անհրաժեշտության դեպքում հաշվի առնելու դրանք վերջնական զեկուցագրում, որը թողարկվում է վեճի կողմերին, երբ այն ներկայացվում է քննախմբին: Վերաքննիչ փորձագիտական խմբի վերջնական զեկուցագիրը միայն խորհրդատվական է: